

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ-ԵՐԳԻՉԱԲԱՆԱԿԱՆ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԹԱՆԹԱԹԵՐԹ

№ 6 կիրակի 10 փետրուարի երկրորդ տարի 1891

ԲԱՅՐՕՆ

Դեռ աշխարհը չէ ծընել մինչև այժմ Բայրօնի պէս պօէտ։ Բնութեան պարգևած հանճարով նա եղել և կըմնայ թագաւոր և հրամանատար պօէզիայի բոլոր հրեշտակներին և դևերին։ Իր անսահման, սքանչելի երևակայութեամբ-ասում է Շեքսպիրը-Բայրօնն ապացուցեց, որ նրան հասկանալի ու մերձենալի են բնութեան ամենաբարձր խաւերը, որ նրան հպատակում են աշխարհի էութեան ամենախոր անդունդները, հիւսիսն ու հարաւը, արևելքն ու արևմուտքը, մարդկային սրտի ամենածածուկ անկիւնները, ուրիշների կեցութեան ամենատարօրինակ յատկութիւնները և այլն։»

Դէօթէն Բայրօնի մի գրուածքի մասին խօսելիս ասում է՝ «անսահման հանճարաւոր գործ, որի մէջ ատելութիւնը դէպի մարդը հասնում է ամենախիստ կատաղութեան և սէրը դէպի մարդը—ամենաքնքոյշ սրտագին կապակցութեան»։ Նոյն գրուածքի մասին խօսելիս Բէօրնէն բացագանչում է. «Տէ՛ր Աստուած, այս ինչ ոյժով և ինչ քնքշութեամբ է որոտացնում Բայրօնն իր սրինգը։»

Հորդ Բայրօն

Ի՞նչ բան չէ երգել Բայրօնի քնարը. սկսած վարդից, սոխակից, սիրուց։ Նա ձեռից բաց չէ թողել դժոխքի անդունդներում ծածկուած դէպերին անդամ։ Նա իր հսկայական ձեռով խլել է ամբողջ մարդկութեան երեսից դիմակը և կոխկրտել իր ոտերի տակ։ Նա իր դիւթական գաւազանի ոյժով, իր հանճարի զօրութեամբ հաւաքել է իր չուրջը ամբողջ աշխարհը իր բոլոր մերկութեամբ և հարկադրել է նրանց ցոյց տալ մարդկութեան իր ամենակատաղի օրդիան։ Եւ այդ ամբողջովին ոգուց և ջղերից կազմուած հանճարը մի օր չէ ուրախացել, մի օր կատարելապէս երջանիկ չէ եղել իր այդ համաշխարհային թագաւորութեան մէջ։ Նա կրել է իր դէմքի վրայ ամբողջ աշխարհի վիշտը և այդ վշտով էլ մտել է գերեզման։

Ջորջ-Բայրոն-Գորդոն ծնվել է Լոնդոնում 1788 թվին։ Նրա դեմքի գեղեցկությունը հազվագիւտ էր և շլացնող, միայն պոէտի ոգին ճնշում էր մի ոտի կաղություն պատճառով։ Դեռ մանկության հասակում ընկերներից, նոյն իսկ իր հարազատ մորից լսած ծաղրը իր կաղության մասին խոր վերքեր էին թողնում երիտասարդ հանճարի սրտում և նրա մանկական անարատ ոգին զզվանք էր զգում դէպի մարդիկ՝ նրանց անխղճության և ուրիշի դժբախտության վրայ ծիծաղելուն համար։ Այդ զզվանքը դէպի մարդիկ իբրև մի անվերջանալի թել չարունակվում է Բայրոնի ամբողջ կեանքի ընթացքում մինչև նրա մահը։ Բայրոն մինչև ութ տարեկան հասակը անցկացրաւ իր մանկությունը Շոտլանդիայում, ուր նա կաղդուրվեց թէ ֆիզիքապէս և թէ հոգեպէս։

1798 թվականին նա առաջին անգամ մտաւ Գարրոի դպրոցը և վեց տարի սովորելուց յետոյ 1804 թվին (16 տարեկան) սիրահարվեց Միսս-Չէվորա գեղեցկուհու վրայ, որը չդնահատեց կաղ պատանու սէրը և դնաց մի աննչան մարդու։ Հպարտ պոէտը վիրաւորվեց մինչև ոգու խորքը և նա իր վշտից ծնեց նրաղ բանաստեղծությունը, որը լի է հոգեկան անկեղծությամբ։ Այդ օրվանից սկսում է գրել Բայրոն ու գրել անընդհատ, մեկ մեկի հետևից ընծայելով աշխարհին իր անմահ քերթվածները։

Բայրոն ամուսնացաւ 1815 թվին և իր առաջին աղջկան ծնունդից յետոյ 1816-ին արդէն առանձնացած էր իր կնոջից։ Նրանք բաժանվեցին միմեանցից մնալով բարեկամներ և թէ այդ բաժանման մէջ ո՞րն է նրանցից մեղաւոր, այդ մինչև այժմ իսկ մնացել է անհասկանալի։ Փոթորկալից է այդ անհանգիստ պոէտի կեանքը. նա իր դոյության առաջին օրվանից մի տեղ չէ հանգստացել։ Նա դեռ 1809 թվին սկսեց ճանապարհորդել դէպի Իսպանիա, Պորտուգալիա, Ալբանիա և այդ ժամանակ գրեց իր Չայլդ-Հարոլդի առաջին մասը։

1816 թվականին նա հեռացաւ Անգլիայից որպէս զի այլ ևս չվերադառնայ այնտեղ և հանգստանալով Շվեյցարիայում Ժենեվի լճի ափերում ու լեռներում թափառելով, նա ծնեց իր հանճարից բազմաթիւ գրւածքներ, որոնց կարդալուս մարդ աքանչանում է պոէտի ոգու վրայ։ Այդ ժամանակ նա գրեց «Խաւարը», «Պրոմեթէոս», «Շիլոնի բանտարկեալը», Մանֆրեդը, մի դրամա, որ թափանցում է մարդկային սրտի գաղտնիքների ամենախորը։ Այդտեղից գնալով Իտալիա, այնտեղ գրեց իր նշանաւոր «Տասսոյի դանդատը»։ Վշտի տակ ճնշած դէպի մարդկությունը տածած զզվանքից փախչելով Բայրոն, Վենետիկում անձնատուր եղաւ ամենաուրախ և զւարճալի կեանքի, կարծելով թէ դրանով կարող է մոռացնել կամ գոնէ թմրեցնել իր վիշտը։ Այդտեղ նրա հանճարն աւելի բորբոքվեց և նա այդտեղ գրեց իր «Դոն Ժուանը», որ համարվում է Բայրոնի ստեղծագործությունների պսակը։ «Դրա մէջ ասում է Շեքը—երևում է մութ, ամպամած երկինքը, որ չէ թոյլ տալիս ազատ ամբողջ կրծքով շունչ քաշել։ Ճնշվում է մարդու ոգին, չարագործությունների կործանման և համաշխարհային վշտի չփոթության մէջ։ Յուսահատության փայլուն չանթերը պատռվում են խաւարը և ինչպէս չարախնդաց քրքիչով ծիծաղող որոտումն լսվում է անվերջանալի ձեւակերպություններով Մեֆիստոֆելի հաւատամքը. «Ամեն ինչ որ գոյանում է, գին ունի միայն այն պատճառաւ որ ոչնչանում է։ Բայրոնը մեր ժամանակի իսկական պոէտն է, որովհետև նրա գրւածները մարմնացումն են այն վշտերի, որոնք մեզ տանջում են և մաշում...»

Բայրոնի մահը ոտանաւորներին թիւ ու համար չկայ և նրանցից իւրաքանչիւրը մի փունջ է դիւթական զմայլեցուցիչ հոգով։ Ի դէպ ասենք, որ Բայրոն Վենետիկ եղած ժամանակ զբաղվում էր հայերէն լեզու սովորելով և նա մի քանի նամակներ ունի գրած հայերի մասին։ Հայ ազգի համար Բայրոն ասում է իր մի գրւածքի մէջ «Հայերն ինչ առաքինություններ ունին—իրանցն է, իսկ ինչ մոլություններ որ ունին, օտարներից է ստացած»։

Վերն ասացինք, որ տանջված հանճարը հանգստություն չէր գտնում ոչ մի տեղ, նրա ոգին միշտ ծարաւ էր զգում, միշտ պապակում էր. նա ուզում էր կռիւ, մաքի պատերազմ, յաղթանակ էր ուզում, ուզում էր սիրել մաքին և նրան ազատել մարդկային բռնությունից, հէնց այդ է պատճառը, որ նա միշտ վազում էր դէպի ճնշածը նրան ազատելու համար։ 1823 թվականին, երբ Յունաստանն սկսել էր պարզել իր ազատության դրօշակը, Բայրոնը ծախսեց իր բոլոր նիւթական միջոցները, կազմակերպեց մի խումբ կամաւորներ, և նրանց գլուխն անցած գնաց Յունաստան, որ պատերազմէ ինչպէս զինւոր Յունաստանի ազատության համար։ Եւ այդ եղաւ նրա մահուան պատճառը, այդտեղ նա երգեց իր վերջին երգը։ Նա մեռաւ 1824 թվին 36 տարեկան հասակում, իր հանճարի ամենափայլուն շրջանում։ Երբ նրա մարմինը բերին Անգլիա, անգլիական փարիսեցիք մերժեցին նրան թաղել Վեստմինստրի վանքում։ Բնության որդու, պոէտի մարմինն ամփոփվեց ազատ բնության մէջ Գոկնել գիւղի եկեղեցում։

—

ՎԵՐՋԻՆ ՎԵՐՖԵՐ Է։

ՁՈՎԱԾ ԾՆԿՆԵՐ, ԼՈՆԱՐՀ ՎԱՋԵՐ

Կայ հիւանդոտ դրությունն, որի միակ բժշկությունը մահն է, դալիս են բոպէներ, երբ մարդը իր սովական սիրոյ գոհն է դառնում։ Նա չափազանց սիրում էր իր անձը, չափազանց շատ է պաշտում նրան և ահա այդ անձնասիրությունը մահացնում է նրան։ Վճռական բոպէին, երբ վտանգը եկել, հասել է, երբ արիւն պիտի հոսէ և մարդ պիտի մեռնէ, անձնասիրությունը բոլորովին յիմարացնում է մարդուն. նա բոլորովին կորցնում է խելքը, նա չի ուզում մարդ ճանաչել, միտք հասկանալ, այլ առաջ է վազում և գրկում է այն բանը, որից այնպէս վախում էր—մահը։ Այդ տեսակ մի ինքնայօժար սպանության է դիմում և փոթորկից ջնջված ոչխարը, որ վազում է ծովն ընկնում, խեղդվում, կամ թէ ժայռից գլորվում է, փշրվում։

Նշանակված ժամանակը—մի դիշերը—անցաւ, բայց Աւրաքոլին չեկաւ, ալիւր չբերեց։ Նրան սպասում էին լալով կսկիծով։ Կէսօրն էլ անցաւ, նա դարձեալ չկայ...

Ուրեմն նա խաբել է այսքան մարդկանց, խաբել է մի երկու օր էլ այդ քարային արգելարանում պահելու համար։ Այսպէս վճռեց ամբոխը և տեսնելով որ արեգակը կէսօրւայ կէտից դէպի արևմուտք է թեքւում, հաւաքեց իր տնային իրերը և խմբւեց բերդի դռների մօտ։ Մի ինչ որ տենդային թուլութիւն, մի ինչ որ կամակոր բթութիւն նրան առաջ էր քաշում։ Բերդի պահապաններից չատերը վաղուց մոռացել էին կարգապահութիւնը և արդէն փախչողների չարքումն էին։ Նէ դռների ետևը դարսած քարէ պատը աղմուկով քանդւեց կիսով չափ. հատ դռների նիգերն ու փականքները արձակւեցան։ Զրաբերդը, այդ ահարկու ամրութիւնը, ողջ ու առողջ յաղթւեցաւ, փչրւեցաւ։ Թարթարի ձախ ափին թշնամու ուրախական աղաղակները մինչև երկինք բարձրացան . . .

Ղամար-Սալթանը մնաց բերդում. նա չէր ուզում անձնատուր լինել և այդ այնպիսի մի ժամանակներում նրա մօտ երկու հատ հաւատարիմ ծառայ էին մնացել։ Նա անձամբ այդ երկուսին տարաւ դռների մօտ, որպէս զի ամենքը դուրս գնալուց յետոյ կրկին դուռը պնդացնէ. եթէ մինչև Աւրաքօլու գալը պահւէր այդ բերդում, այնուհետև կարող էր անհոգ մնալ։ Բայց նա կարճ միջոցում տեսաւ որ ամեն ինչ կորել է և այլ ևս անհնարին է օգնութիւն հասցնելը։ Այդ ամբոխը միանգամից դուրս չրթափւեց, չրդատարկեց բերդը. ոչ, այլ երկար ժամանակ բաց էր պահում դռները, աղաղակում էր։ Շատերը դուրս էին գալիս, մէկ էլ յետ դառնում, որ կրկին դուրս գնան. մի քանիսները մեխւած, կանգնած էին չէմքում և նայում էին գնացող եկողներին։ Որի երեխան էր մնացել և նա նրան էր որոնում, որի մի կտոր չլանն էր մոռացել։ Խառնակութիւնը յուսահատութիւն էր պատճառում մի կողմից նայողին։ Այդպէս յուսահատւեց և Ղամար-Սալթանը։ Տեսնելով որ խօսք ու հրաման նշանակութիւն չունին, նա յետ դարձաւ, գնաց իրայինների մօտ, որպէս զի գոնէ նրանց հետ միասին գնայ, ուր որ պէտք էր գնալ։ Նա այլ ևս նշանակութիւն չունէր. նա այժմ մի թոյլ կին էր։

Այդ խառնակութեան, իրարանցումի ժամանակ ներս խուժեցին թուրքերը։ Մի սոսկալի օրհասական ճիչ բարձրացաւ դռների մօտ խմբւած մարդկանց մէջ։ Ամբոխը, կարծես, նոր հասկացաւ թէ ինչ կորստաբեր քայլ է արել. մի քանիսը յետ փախան դէպի բերդի դռները, ներս վազեցին «Աստւած» աղաղակելով։ Բայց իզուր . . . Ոչ թուր խաղաց այդքան մարդկանց գլխին, ոչ հրացան որոտաց։ Ամենքին առանց դժւարութեան կապոտեցին երկայն չլաններով։ Այժմ դեռ մարդ սպանելու, պատժելու ժամանակ չէր, հարկաւոր էր բոլորին բռնել, իսկ բոլորից առաջ ձեռքից չրդցել այն մարդկանց, որոնք ամենից համեղ պատառն էին։ Տեսնելով որ դրանք չրկան դռների մօտ, թուրքերը միմեանց հրելով, միմեանց օգնելով դէպի վեր գնացին մեծ դժւարութիւններով։

Ղամար-Սալթանը առանց որ և է ընդդիմադրութեան թոյլ տւեց որ իրան կապեն։ Կապեցին նմանապէս Գիւլ-Ջհանին, որի դրկումն էր մանուկ Հաթամը։ Դրանք էին ամենահարկաւոր մարդիկը. երբ դրանց տարան, թուրքերի խիտ խումբն էլ հեռացաւ, գնալով դերվիշների ետևից և գործը վերջացրած համարելով։ Մի բարձրահասակ մարդ անդադար հրամայում էր որ ոչ ոք չընդամարձակւի դրանց ձեռք տալ, որովհետև դրանք ողջ և առողջ խանի դուռը պիտի հասնէին։

Մոռացել էր Սանամը։ Նա տան չէմքում կանգնած սառել էր. նրա աչքերը ահից մեծացել էին, տրաքւում էին։ Սակայն այդ աչքերով նա տեսաւ որ դեռ բոլորը չեն հեռացել. դեռ հատ հատ մարդիկ ման էին գալիս, տների պուճախներից իրեր էին դուրս տանում։ Նա ուզում էր դուրս գնալ, բերդի գլխին կանգնել և տեսնել թէ ուր են տանում իրանց տնայիներին. բայց այդ միջոցին տեսաւ որ դէպի իրան է գալիս մի հսկայ թուրք։ Նրա սիրտը կոտրւեց, ցած ընկաւ, ծնկներն սկսեցին դողդողալ, և այդ իսկ օրհասական րոպէին էլ նա նկատեց որ այդ թուրքը հրէշի մէկն է, աչքերը գազանային, կարմրած, արիւնով լցած, բեխերը չափազանց հաստ, քիթը մեծ և մէջտեղից կտրած, երեսը կարմիր ու կարմիր մազերով ծածկւած, ուսերին սև փափախը գլխին դրած։ Նա սկսեց դէս ու դէն նայել, որոնել, բայց ոչինչ չըգտնելով, յետ ծալեց իր չուխան ու թևքերը և մօտեցաւ դէպի Սանամը։

—Փառք Աստծու, սա էլ բաւական է, ասաց նա թուրքերէն։ Հասկացաւ արդեօք Սանամը թէ ոչ . . . Բայց մի ակնթարթում նա գետնից վերցրեց մի քարի մեծ կտոր թուրքի գլխին խփելու համար։ Վերջինս, տեսնելով նրա բարձրացրած ձեռքը, յետ ու յետ գնաց զարմացած։ Այդ իսկ րոպէին Սանամի ականջին հասան հայերէն այս խօսքերը.

—Տեսար, ես եկայ քեզ տանելու. ես ասում էի որ քեզ կըտանեմ, կազատեմ։

Նա յետ նայեց։ Ստեփանը թևերը տարածած դէպի իրան էր գալիս։ Նրա ձեռքը մի ակնթարթում թուլացաւ, քարը վայր ընկաւ։ Նա սկսեց ձեռքով նշան անել որ նա դէն գնայ. հէնց այդ ժամանակ էլ թուրքը նորից դէպի նրա էր գալիս։ Տեսնելով որ Ստեփանը շատ է մօտեցել, նա երեսը շուռ տւեց և երկու ձեռքով յանկարծ բռնեց թուրքի վիզերը։—Նա այդ թուրքի դերին էր։ Ստեփանը վրայ վազեց, փորձեց թուրքից յետ խլել, բայց սա հանեց իր սուրը և հարկադրեց նրան փախչել, դուռալով նրա ետևից.

—Մելիք-Մեժլումի օջախից սա է ինձ հանում. մեծ բան չէ։ Նա սպանել է լիմ երեք որդիներին. հիմա հերթն իմն է. պիտի ուտեմ, կտոր կտոր միսը պիտի տամ նրանց տակ առնեմ։

Նա պատառոտեց Սանամի գլխաչորը, հանել տւեց նրա կօշիկները և այդպէս իր առաջը դցեց, ոտաբոբիկ տարաւ։

Այդ օրը շուտ չրգնաց թուրքերի բանակը։ Արեգակը մայր մտնելու վրայ ամենքը մի տեղ հաւաքւեցան դիշերելու։ Այդ տեղը Թարթարի աջ ափին էր, տերևախիտ անտառում։ Կրակներ վառեցին, շուտով խորոված ոչխարին շամփուրներով պտտում էր կրակի վրայ։ Ծառերի տակ թափւած էր դերվիշների բազմութիւնը. ամենքը կապոտած էին, ամենքը հեծում, հեծեծում էին պինդ կապանքներից։ Թուրքերը հեշտութեամբ կանանց բաժանեցին իրանց մէջ. երեխաները, ինչպէս աւելորդ բեռ, կոտորւեցան հէնց այդտեղ, մայրերի, քոյրերի աչքի առաջ։ Տղամարդիկների վզերը երկայն թոկերով կապած էին. նրանց ոչ ոք չէր նայում, հացի կտոր չէին տալիս. երբեմն միայն մէկը կրծոտում էր սոկորը և շպրտում էր դէպի նրանց այնպէս, ինչպէս աւելորդ պատառ են շպրտում շներին։ Երկու տղամարդ արդէն կախ էին ընկած ծառերի ճիւղերից. նրանց ձեռքերը կապոտած էին մէջքերի վրայ, վիզները երկարացել էին, աչքերը դուրս էին դուռել,

կարծես նրանք չատ էին զարմացած մի ինչ որ բանի վրայ. և արիւնոտ լեզուները կախ էին ընկել բերաններից ... Անտառը, կարծես, դեբեզմանական ոգիներով էր լցուած. անտառների լացն ու կոծը հարիւր կերպ փոխուելով, արձագանք էր տալիս չորս կողմում։ Մի տեղ երկու յափշտակողները սրերը հանած կռիւ էին անում մի աղջկայ վրայ, միմեանցից խլում էին նրա թուլացած, անկենդան մարմինը։ Մի ուրիշ տեղ մի կնոջ տիրացած մահմետականը չշտապելով, հանդարտ, ամեն մի բանը ուշադրութեամբ զննելով հեռացնում էր իր աւարից աւելորդ ծանրութիւնը, նրա զգեստը և բախտաւոր ժպիտը բերանին՝ մի անասելի լրութեամբ չօչափում էր նրան ամեն կողմից։ Իսկ չատ այդպիսի կանայք արդէն հաշտուել էին իրանց դրութեան հետ և իրանք էին կատարում այն, ինչ որ հրամայում էին ...

Մի ծառի տակ մէջքի վրայ վայր էր դցած Ղամար-Սօլթանը։ Նա լուռ էր, պահում էր իր սրտի դառնութիւնը, չէր աղաղակում, լաց չէր լինում. միայն երբեմն տղամարդի պէս ծանր տնքում էր կապանքների պատճառած ցաւից։ Նա սիրտ էր տալիս իր հարսին, որ նստած էր նրա կողքին և երեխան պինդ խատած էր։

—Տէր Աստուած, մրմնջում էր Դիլ-Ջհանը,—ինչ կը-լինի իմ ճարը եթէ երեխաս էլ ձեռքիցս առնեն։

Նա ասում էր այդ խօսքերն այնպէս, որ Ղամար-Սօլթանն էլ էր լսում։ Մայրական սրտի կսկիծը բաց էր արել լեզուն, մոռացնել էր աւել հարսի յարգանքը դէպի սկեսուրը, որի մօտ նա չըսպիտի խօսէր։ Սկեսուրը լսում էր այդ մրմունջը և ասում.

—Մի՛ վախիր, Աստուած մեծ է. իսկ եթէ տեսնես որ գալիս են դէպի քեզ, երեխան ձեռքից չըտաս. լսում ես, ձեռքից չտաս, կրծքիդ սեղմիր, թող քեզ էլ նրա հետ սպանեն, ես էլ կըսպանուեմ ձեզ հետ։

Մայրը այդ խօսքերի վրայ պինդ իր կրծքին էր սեղմում երեխային, կարծես դրանով ցոյց էր տալիս որ երբէք չի թողել նրան, ոչ ոքին չի տալ։ Հարս ու սկեսուր այդպէս էին վճռում, չիմանալով որ Հաջի-բէկը խստիւ հրամայել է բոլորովին չըմօտենալ մէջքի ընտանիքին։ Այդ ընտանիքի համար անդամ հաց էին պատրաստում. ամենքը գիտէին որ այդ երկու կինը և մի երեխան Հաջի-բէկի գերիներն են։

Ինքը, Հաջի-բէկը, հեռացել էր ամենքից, ծմակի խորքում փռել էր աւել գորգը և դլխաւոր մօլլայի հետ ծունկչոք կատարում էր գոհացողական աղօթք։

Հեռից, ծառերի ետեից նայող մէկը տեսնելով որ աղօթքը վերջացաւ, դուրս եկաւ դաստանից և աչքերի արտասուքը սրբելով մօտեցաւ բէկին։ Դա Ստեփանն էր։

—Ի՞նչ Աստուծոյ, ասաց նա փափախը վերցնելով. —Ողորմիր, ինձ մի ճար արա։ Կնիկս խլել են։

—Ո՞վ է խլել, հարցրեց Հաջի-բէկը ծանր կերպով պառկելով աջ կողքի վրայ։

—Բօլանի Իսմայիլ-բէկը։ Որքան աղաչում, պաղատում եմ, չի տալիս։

—Այ տղայ, ինչ վատ է դառել։ Իսմայիլ-բէկից բան խլելը դժուար է։ Նա մարդուն սատում է, ուտում։

—Բէկ, թէ Աստուած կըսիրես, այդպէս մի անիր։ Իմ սիրտը ճաքում է, ես կըմեռնեմ։

—Ի՞նչ ես լաց լինում, դու էլ հօ կնիկ չես... Թող, սպասիր, երևի բարկացած է, երբ բարկութիւնն անցնի, քեզ կըտայ։

—Նա չուտով պիտի բաժանուի մեզանից։

—Մի վախիր և նրան մի խօսացնիր։ Նրան Իսմայիլ բէկ են ասում, գիտես։ Զարմանալի է—դարձաւ բէկը դէպի մօլլան.—Իսմայիլ-բէկը մինչև այսօր չի դնացել Մեքքա. հինգ տարի առաջ էր ասում թէ պիտի դնայ։ Ամօթ կըլինի նրա համար, եթէ այդքան կարողութեան տէր լինելով չկատարէ իւրաքանչիւր մուսիւլմանի պարտականութիւնը։

—Բէկ, դարձեալ խօսեց Ստեփանը.—խնդրում եմ, աղաչում եմ, մի մարդ ուղարկիր նրա մօտ, ասա որ ինձ չընեղացնէ։

—Է՛հ, ինչ ուղարկեմ. միթէ ես չըգիտեմ թէ նա ով է, որ դեռ մարդ էլ ուղարկեմ։

Ստեփանը թուլացած գլուխը կախ արեց։ Նրա աչքերը մի վայրկեան մթնեցին. նա ուզեց չոքել, բայց թուլացած ոտները ձգեց, կանգնած մնաց և այս անդամ դարձաւ դէպի մօլլան.

—Մօլլայ, Աստուած կըսիրես, դու մի ճար արա։

Մօլլան երկարացրեց իր թրաչած, կարծես յղկած, բարակ վիզը, իր անշարժ ու մի տեսակ վեհութիւն յայտնող աչքերով մի սառն, անկենդան հայեացք ձգեց նրա վրայ, կարծես թէ չէր լսել նրա խօսքերը և չարունակեց լուռ մնալ։

Ստեփանը յետ դարձաւ, գլուխը մի քանի անդամ թափահարեց և յուսահատ հեռացաւ շտապ քայլերով։

—Նա մեզ հարկաւոր մարդ է, ասաց Հաջի-բէկը նրա ետեից նայելով և կանչեց.

—Մի վախիր, Ստեփան, ասածս ասած է, դու կըստանաս չատ պարգևներ։

Բայց Ստեփանը չլսեց անդամ այդ խօսքերը։ Գըտնելով Աթային, նա պինդ բռնեց նրա թևից և քաշեց, տարաւ մի մեծ ծառի ետեը։ Այդտեղ նա խիստ զայրացած ասաց.

—Իմ կնիկը թուրքի մօտ է ... Էլ ես ինչ տղամարդ եմ, հը՞, Աթա, ես ի՞նչ մարդ եմ։

Այդ խօսքերի հետ վերցրեց իր փափախը և պինդ դետնին խփեց։

—Ա՛ռ այդ փափախը. ես տղամարդ չեմ, դնա մի լաչակ բեր, գլուխս կապիր։ Կնիկ եմ...

Նա սկսեց լաց լինել բարձր ձայնով։ Աթան զարմացած՝ ուսերը վեր քաշեց և մի երկու քայլ հեռացաւ նրանից։

Նոյն օրը երեկոյեան Աւրաքօլին երկու ուրիշ մարդկանց հետ չալները չալակած դէպի Զրաբերդն էր դիմում։ Նրանք բարձրացան նոյն հիւսիսային կողմի ժայռերով, սարսափելի դժուարութիւններով բերդի գլուխը հասան։

Բերդը ամայի էր, մեռած. ձայն ու ծպուտ չէր լսւում, միայն ջրերն էին վշշալով պատում բերդի շուրջը։ Աւրաքօլին մի ակնթարթում հասկացաւ այդ լռութեան, այդ մեռելութեան պատճառը։ Նա զայրացած՝ նաիր հետ բերած չալները ցած գլորեց բերդի գլխից դէպի Թրղու ձորը։

Ղ. Ղ. Օ

(Կըշարունակուի)

Սիսա Լեռն:

ՄՐՑՈՒՄՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԵՏ

Վէպ տիկին Լիդբէր-Լէֆլէրի

(Շարունակութիւն)

Իսէը Աստուծոյ վերցրէք ձեր գլխարկը, ասաց Բէրնսոնը, որ մօտիկ կանգնած նայում էր նրա կորացած գլխին։ Ինչո՞ւ դուք միշտ հին ձևով էք հագնւում. ձեր գլխարկի վրայի այդ ահագին փետուրները և ձեր զգեստի մուք գոյնը շատ կըսազէին միայն ձեր մօրը։ Եւ ինչո՞ւ ձեր զգեստները երբէք այնպէս Ճնլւած չեն լինում, ինչպէս ձեր քոյր Դուրլինը։ Ինչո՞ւ համար ձեր մազերը միշտ այդպէս հարթ են սանրած։ Ախ, եթէ գոնէ մի անգամ ինձ յաջողէր տեսնել ձեզ սարից իջնելիս, պատռատած զգեստով, ցրւած մազերով, արևից սևացած ձեռներով, և դուք շոգից կարմրած.—այն ժամանակ ինչպէս գեղեցիկ կըլինէիք դուք։

—Խնդրեմ... Դուք միայն օրիորդների հետ կարող էք այդպիսի կատակներ անել, ասաց Արլան, գլուխն արագ բարձրացնելով—բայց...

—Խոնարհաբար ներողութիւն եմ խնդրում, տիկին Նադվօրնի սովետնիկուհի.—ներեցէք, ես այնքան անուղղելի եմ և անսանձ, որ կինը միշտ իմ աչքում աւելի բարձր է կանգնած, քան Նադվօրնի սովետնիկուհին։ Արլան էլ աւելի կռացրեց գլուխը դէպի իր ձեռագործը։ ,,Մի՞թէ անհնարին է լինելու սրա գլուխը վեր բարձրացնել„, մտածում էր Բէրնսոնը։

—Դուք գիտէք որ ես պէտք է հեռանամ երկու շաբթից յետոյ, հարցրեց նա մի քանի րոպէ լռութիւնից յետոյ։

—Երկու շաբթից—Արլան գլուխը բարձրացրեց—ես կարծում էի...

—Ես նամակ ստացայ իմ բարերարներից. ասաց նա հեգնական կերպով շեշտելով այդ բառը, Ճանապարհ ընկնելու համար ամեն բան պատրաստ է և որովհետև երեխաներն առաջիկայ շաբաթ ուսումնարան պիտի գնան...

—Ես յոյս ունիմ որ Ճանապարհորդութիւնը ձեզ համար օգտակար կըլինի, ասաց Արլան սառն և անբնական ձայնով։

—Շնորհակալ եմ, դուք չափազանց բարի էք։ Միայն ցաւում եմ որ ձեր այդ ասած խօսքերից և ոչ մինը ձեր մտածածը չէ։ Նա բարձրացրեց ձայնը և սկսեց խօսել յուզւած ոճով։ Դուք այնպէս էք շարունակում իմ երեսին ձեր «բարի Ճանապարհը», որ կարծէք թէ ձեր առաջ մի մուրացկան է կանգնած, որ մի կոպէկ է խնդրում ձեզնից.—ես չեմ ցանկանում ձեր ողորմութիւնը։ Ձեզ ինչ թէ ես ինչպէս կապրիմ, լաւ թէ վատ։ Մի՞թէ աշխարհիս երեսին դրանով հետաքրքրւող գոնէ մի մարդ կայ։ Եթէ ես, օրինակի համար, կորչեմ մինչև անգամ մի մեծ քաղաքում, կամ ժայռից վայր գլորւեմ, ինչպէս շատ անգամ պատահում է, ո՞ւմ ինչ. Ճշմարիտ շատ ծանր է, երբ մտածում եմ, թէ աշխարհիս երեսին ոչ ոք պիտի ցաւի ինձ վրայ, ոչ ոք չպիտի նկատէ իմ բացակայութիւնս. ոչ մի հասարակութեան մէջ իմ տեղը չպիտի երևայ. ոչ ոք ինձ չպիտի վնարէ։

—Ի՞նչ անշնորհակալ մարդ էք։ Մի՞թէ քիչ բարիք է որ ձեզ համար արել են այն մարդիկը, որոնք ձեր Ճանապարհածախքի համար միջոցներ են ժողովել։

—Ճշմարիտ է, Ճշմարիտ է. ես նրանց մոռացայ։ Ի հարկէ այդ անձինքները կը ցանկանան իմանալ, թէ իրանց փողերի գլխին ինչ պիտի գայ. եթէ ես կորչեմ, նրանք աւելի կըկորցնեն, ինչպէս կորցնում են ակցիոներները, երբ նրանց նաւն ընկղմում է։

—Թիու... ես երբէք չէի կարող կարծել թէ դուք ընդունակ էք այդպիսի զզւելի խօսքեր խօսելու։ Ձի՞ որ նրանք օգնում են ձեզ միայն այն պատճառով, որ հետաքրքրւում են ձեզնով։

—Բայց մի՞թէ ակցիոներները չի՞ն հետաքրքրւում իրանց շինել ուած նաւով։ Նրանք կարծում են, թէ իմ նաւը նրանց մեծ եկամուտ կըտայ. կարծում են թէ ինձնից մի նշանաւոր բան դուրս կրգայ և նրանք այն ժամանակ կարող են ասել. "Ահա այն երիտասարդ մարդը, որին մենք օգնեցինք ասպարէզ դուրս գալ, առանց մեզ նրանից ոչինչ չէր դուրս գալ»։ Ես ձեզ Ճշմարիտ եմ ասում, այս տեսակ դէպքեր ամեն օր պատահում են։

—Բայց դուք ինձ վրդովում էք մինչև իմ հոգու խորքը, գոչեց Արլան սովորականից աւելի ձայնը բարձրացնելով։ Էլ ինչպէս կարելի է գտնել որևէ բարձր ու վսեմ բան, երբ մարդ նայում է ամենի վրայ այդպիսի ստոր տեսակէտից։ Ձեր կողմից այդ ոչ այլ ինչ է, եթէ ոչ մեծամտութիւն.—դուք չէք ուզում շնորհակալ լինել սրծաւ գնաց...

—Դուք արդար էք. ես միշտ խոստացել եմ պարտքերս անելուց, որքան էլ գեղեցիկ լինի այդ պարտքերի անունն։ Ես ոչ ոքի ծառայութիւն չեմ մատուցանում և իմ այդ քնքշութեան համար միայն մի վարձ եմ խնդրում, այն է—ուրիշից էլ ոչինչ ծառայութիւն չպահանջել և չտանալ։ Ես այդ փողերն ընդունում եմ միայն այն պատճառով, որովհետև այդ միայն մի սակարկութիւն է, ինչպէս քիչ առաջ ձեզ ասացի և ես վաղ կամ ուշ կըվերադարձնեմ այդ փողերը։ Եթէ հայրս ինձնից առաջ մեռնի, ես շատ հարուստ կըլինիմ։

—Մի՞թէ դուք չի՞ք վախենում վիրաւորել ձեր խնամակալներին, այդ տեսակ խնդիրներ գարթեցնելով։

—Օ՜, ի հարկէ նրանք կըվիրաւորւեն։ Նրանք, անկասկած, աւելի շահ կըստանային իրանց փողերից, եթէ կարողանային ինձ միշտ իրանց պարտական պահել։ Բայց թող նրանք իրանց դրամագլխի համար մի ուրիշ սնդուկ փնտրեն, իսկ ես կըբաւականանամ նրանց երեսից ազատուել միայն տոկոս վճարելով նրանց։

—Մի՞թէ դուք ինքներդ չի՞ք զգում, որ ձեր բոլոր խօսածները այնքան վրդովեցուցիչ են, այնքան ստոր են և կեղտոտ, որ իմ համբերութիւնս հատեցնում են։ Ես ձեզ աւելի լաւ էի համարում, ես երբէք չեմ կարծել թէ դուք այդքան մեծամիտ էք, այդքան եսական և այդքան անշնորհակալ։ Ո՜հ, ինչպէս կսիծում է իմ սիրտս. դուք այնպէս էք վրդովում ինձ ձեր խօսքերով, որ ես, ես, այո.... չեմ կարողանում ինձ զսպել... Արլան ծածկեց երեսը ձեռներով և հեծկլտաց։

Մի վայրկեանում Բէրնսոնը թռաւ պատշգամբը Արլանի մօտ։

—Թող օրհնէ ձեզ Աստուածը այդ արտասուքների համար, ասաց նա սրտաշարժւած։ Մինչև այսօր դեռ ոչ ոք չէ լացել իմ վրայ, ես այդ արտասուքները չեմ մոռա-

նալ.—և արագութեամբ բռնեց Արլայլ ձեռքերն իր ձեռքերի մէջ և համբուրեց։

—Ուրեմն դուք լինձ—գոնէ մի քիչ սիրում էք, ասաց նա ջերմագին.—Ասացէք լինձ, ոհ, խնդրում եմ, գոնէ միանգամ բնական և անկեղծ եղէք. մի մտածէք նրա մասին թէ քաղաքավարութեան և թէ անքաղաքավարութեան մասին. ասացէք միայն երեք խօսք, այս երեք խօսքը—ես ձեզ սիրում եմ։

Նա բռնել էր Արլայլ ձեռներն իր ձեռների մէջ և պաղատական նայուածքով նայում էր նրա աչքերին։

Արլան նայեց նրա վրայ արտասուքով լի աչքերով ու ասաց—Այո, ես սիրում եմ ձեզ։

Եւ հէնց այն րոպէին երբ արտասանեց այս խօսքերը, հասկացաւ թէ Բէրնսօնը ինչ նշանակութիւն կարող է տալ նրանց, այդ պատճառով շուտով տեղից վեր կացաւ որ հեռանայ։ Բէրնսօնը նրան չթանգնեցրեց. նա ինքը նոյնչափ վրդովւած էր, որչափ և Արլան։ Նա հեռացաւ պատշգամբից մեծ մեծ քայլերով, գլխարկը ձեռին բռնած և անշարժ նայուածքով առանց զգալու թէ ուր է գնում։ Ճանապարհին նա հանդիպեց իր աշակերտներից մէկին, որն առաջարկեց նրան գնալ անտառն զբօսնելու։

—Թողէք ինձ հանգիստ, խնդրեմ, ասաց նա բարկացած, մի կողմ հրեց աշակերտին և երեսը դարձնելով արագ քայլերով մտաւ անտառ և անհերևութացաւ ծառերի մէջ։

Մի քանի օր էր մնացել Բէրնսօնի գնալուն և այդ օրերն էլ նա և Արլան խուսափում էին տեսակցութիւն ունենալուց։ Բէրնսօնը չխոթւում էր Արլայլ ներկայութիւնով, նրան դիտում էր ծածուկ. բայց միևնոյն ժամանակ էլ չէր խօսում իր առաջւան հաստատամիտ ու վճռական տօնով։ Նա չըգիտէր թէ Արլան ինչպէս վերաբերւեց իր անսպասելի բացատրութեանը և ինքն էլ դեռ կարգի չէր բերել իր մտքերն այդ առիթով։ Նա դեռ շարունակում էր ապրել ամարանոցում և յետաձգում էր իր գնալը։

Այդ օրերն Արլան յաճախ էր դուրս գալիս տնից զամբիւղը ձեռին սունկի գնալու։

Աքանչելի ամառը փոխարինեց անձրևային օրերին ճանապարհները դեռ ցեխոտ էին։ Արլան գնում էր կըրկնակօշիկներով, հագուստը վեր բարձրացրած, հովանոցը ձեռին և փայլուն թաշկինակը գլխին կապած։ Այդ ըզգեստը նրա դէմքի վրայից անհետացնում էր Արլայլն յատուկ կանացի լրջութիւնը և նա երևում էր ինչպէս մի համեստ, ջահել աղջիկ, որ նոր է դուրս եկել մանկական հասակից։ Նրա բարձր և չափաղանց նուրբ կազմուածքը, քիչ ծռած գլուխը, փոսիկ գծագրութիւնը և դէմքի սիրուն ու քնքոյշ գոյնը նոյնն էին, ինչ որ էին նրա աւելի ջահել հասակում։ Անկարելի էր անցնել մեծ փողոցով. ոտերը ցեխի մէջ էին խրւում և կրկնակօշիկները կարող էին կորչել։—Արլան ցատկեց ճանապարհի կողքի փոսի վրայից և սկսեց գնալ անտառի կողքով։ Այդտեղ հողը ծածկւած էր խէճերով և աւելի ամուր էր։ Ճանապարհից քիչ ծռւելով նա մտաւ անտառի խորքը։

Շատ հետաքրքրական բաներ կարող էր պատմել Արլայլ մասին այդ անտառը։ Դրա մէջ բուսած ծառերը աւելի լաւ կներկայացնէին Արլայլ բնաւորութեան յատկանիշերը, քան Արլայլ ամենամօտ ծանօթները։ Այստեղ նա աշխատում էր իր կեանքի դատապարտութեան փոխարէն իրան վարձատրել լուռ մտորմունքով։ Այստեղ նա թոյլ էր տալիս որ սիրէ իր սիրածը, որ սիրոյ համար էր ստեղծւած. այստեղ նա իրան պատկերացնում էր իր կեանքը ամենահիանալի պատկերներով և մի արտաքին ամենաչնչին առիթ բաւական էր նրա նոր մտորումներին կերակուր տալու համար։ Նա երբեմն մեծ զւարճութիւն էր գտնում իր մտքում երևակայելով և որոճալով այնպիսի վրդովմունքներ, որոնց նա չէր կարող հանդիպել իրական կեանքում. նրա սիրտը կարողանում էր կծկւել վշտից ու լացից և նա դառն արտասուք էր թափում երևակայական սրտի տանջանքների մասին. մի ուրիշ անգամ այդ սիրտն ուրախութեամբ լի տրոփում էր երևակայական երջանկութիւնից։

Արլան վերադառնում էր իր սովորական զբօսանքից, երբ հանդիպեց Բերնսօնին. սա գալիս էր ուղղակի Արլայլ դէմ ու դէմ և արագ խօսեց նրա հետ.

—Ես ամեն տեղ փնտրում էի ձեզ մնաք բարև ասելու. հետևեալ շոգենաւով ես գնալու եմ։

—Բայց . . . չէ՞ որ դուք միայն վաղն էիք ուզում գնալ։

—Այո, բայց այստեղ վճռել են որ ես այսօր անպատճառ քաղաքում գտնւեմ։ Մնաք բարև—ես պէտք է շտապեմ։

Արլան նայեց նրա վրայ, այնպէս երբև թէ չէր նկատում որ Բերնսօնը մեկնել էր իր ձեռը բարևելու համար։ Արլայլ աչքերը կարծես ամպած էին, նա դեռ ևս գըտնւում էր երևակայական աշխարհի երկնանութեան տակ և ոչ մի կերպ չէր կարողանում զարթնել և տեսնել իրականութիւնը։

—Մնաք բարև, կրկնեց Բերնսօնը, գլուխ տալով։

Կարո՞ղ եմ համարձակւել առաջարկել ձեզ իմ խնդիրը։

--Այո, պատասխանեց նա մտորմունքի մէջ կորած։

Բերնսօնը նրան խնդիր ունէր. այդ բնական էր. չէ՞ որ նրանք բաժանւում էին միմեանցից և կարող է պատահել որ յաւիտեան չպատահեն միմեանց։

—Թոյլ կտամ ձեզ նամակ գրել։

—Այո, պատասխանեց Արլան մեքենաբար։

—Պատասխանելու էք իմ նամակներին։

—Այո։

Այս էր ամենը։ Նա ամուր սեղմեց Արլայլ ձեռքը և հեռացաւ այնպիսի արագ քայլերով, որ կարծես թէ փախչում էր մի սոսկալի վտանգից։ Արլան տուն վերադարձաւ միայն շոգենաւի ճանապարհ ընկնելուց յետոյ։

(Կըշարունակւի)

ՀՆԴԿԱԿԱՆ ԶՐՈՅՑ

(ՎՕՂԹԸՐԴ)

Պլեթագորը, ինչպէս որ յայտնի է բոլոր աշխարհին, իր Հնդկաստան եղած ժամանակ, Հիմնոսոֆիստներ-ի [1] դպրոցում սովորեց անասունների և բոյսերի լեզուն։

Մի անգամ, երբ նա զբօսնում էր մարգագետնի վրայ, ծովի եզերքից ոչ հեռուում, լսեց սոյն խօսքերը.

—Ի՞նչ դժբաղդ եմ ես, որ խոտ եմ ծնուել. հազիւ թէ կարողանում եմ երկու մատ հասակ առնել և ահա ինձ ոտնակոխ է անում իր ոտներովը՝ մի ագահ հրէշ. այդ զզուելի անասունը կուլ է տալիս ինձ իր բերանով, որ զինուած է երկու կարգ սուր սապարներով. իսկ այդ սապարները կտրտում կամ յօշոտում են ինձ։ Մարդիկ այդ հրէշին անուանում են ոչխար։ Չեմ կարծում, որ աշխարհիս մէջ դրանից աւելի գարշելի մի անասուն լինի։

Պլեթագորը անցաւ և մի ժայռի վրայ տեսաւ մի բաց ոստրէ։

Փիլիսոփան դեռ ևս չէր հեռացում այն զարմանալի վարդապետութեան, որ արդելում է մեզ՝ ուտել մեզ նման անասունների։ Ուստի և պատրաստւում էր ուտելու ոստրէին, երբ սա յանկարծ արտասանեց սոյն աղերսալի խօսքերը։

—Ո՞վ բնութիւն, ինչ երջանիկ է քեզնից ստեղծուած խոտը, որը կտրտուած լինելով, նորից կենդանանում է. նա անմահ է. իսկ մեզ, անբաղդ ոստրէներիս՝ չի պաշտպանում մեր կրկնակի զրահն անգամ։ Զարագործները տասնեակներով ուտում են մեզ իրանց նախաճաշիկի ժամանակ և ահա ամէն ինչ վերջացել է։ Ի՞նչ սարսափելի է ոստրէի ճակատագիրը և որքան անգութ են մարդիկ։"

Պլեթագորը սառաւաց. նա զգաց թէ ինչ մեծ ոճիր էր, որ պիտի գործէր։ Արտասուքը աչքերին՝ ոստրէից ներողութիւն խնդրեց և զգուշութեամբ դրեց նրան ժայռի վրայ։

Եւ որովհետև փիլիսոփան խորապէս էր մտածում այս անցքի վերայ, քաղաք վերադառնալուն պէս, նա նկատեց, որ ճանճին ուտում է սարդը, սարդին ծիծեռնակը և ծիծեռնակին բազէն։

—Բոլոր այս արարածները, ասաց նա, չըգիտեն փիլիսոփայութիւն։

Մտնելով քաղաք, Պլեթագորը դէմ առ դէմ եկաւ մի խումբ դատարկասլորտների, որոնք վազած ժամանակ ցած գլորեցին փիլիսոփային և անցան գոռալով.

—Լաւ եղաւ, շատ լաւ եղաւ, արժանի են...

—Ի՞նչ, ով, հարցրեց Պլեթագորը բարձրանալով։

Իսկ մարդիկ շարունակում էին վազել և գոռալ.

—Ա՜խ, ինչ ուրախ ենք, որ պիտի տեսնենք նրանց խորովելը։

Պլեթագորը կարծեց թէ նրանց խօսքը ոսպի և կամ այլ բանջարի մասին է. բայց բանից դուրս եկաւ, որ խօսքը երկու հնդկացիների մասին է։

—Ա՜խ, ասաց Պլեթագորը—այդ հնդկացիները անշուշտ երկու փիլիսոփաներ պիտի լինին, որոնց կեանքը իրանց զզուեցրել է և նրանք կամենում են վերածնուել ուրիշ կերպարանքով. հաճելի է փոխել բնակարանը, թէև դա լինի առաջինից վատ։ Ճաշակի վրայ վիճել չի կարելի։

Նա խառնուեց ամբոխին, հասաւ հրապարակ և տեսաւ այնտեղ մի մեծ խարոյկ, որի դէմուդէմ դրուած նրստարանի վրայ հեծել էին դատաւորները։ Այդ նստարանը կոչւում էր Դատաւորների նստարան։

Իւրաքանչիւր դատաւոր ձեռքին բռնած ունէր մի կովի պոչ, իսկ գլխին կրում էր մի գլխարկ, որը շատ նմանում էր այն կենդանու ականջներին, որի վրայ նստած՝ Սիլէնը Բաքոսի ընկերակցութեամբ անցնելով Երիտէրեան ծովի վրայից՝ ինչպէս ցամաքով, կանգնեցրին լուսինը ու արևը և հասան Հնդկաստան։ Այդպէս են պնդում որսիկան երգերը։

Դատաւորների մէջ գտնւում էր մի պատուաւոր մարդ, որի հետ Պլեթագորը ծանօթ էր։ Հնդկական այդ խմաստունը պատմեց Սամոսի խմաստունին թէ ինչ կերպով էր կազմուել հնդիկ ժողովրդին զարհացնող այդ հանդէսը։

—Երկու հնդկացիները, պատմեց նա, մի փոքրիկ ցանկութիւն անգամ չունին վառուելու. բայց իմ յարգելի պաշտօնակիցներս դատապարտեցին նրանց այդ պատժին։ Մէկին նրա համար, որ ասել է թէ Քսաքի գոյութիւնը նոյնը չէ ինչ որ Բրամայի գոյութիւնը. և երկրորդին, որ մտածել է թէ «կարելի է բարեգործութիւնով օգտակար լինել բարձր էակին, այնուամենայնիւ չբառնելով մահուան ժամանակ կովի պոչից, որովհետև, ասել է նա—բարեգործութիւն անել ամեն ժամանակ կարելի է, իսկ կովի պոչ գտնել ոչ յանախ։ Քաղաքի բարի կանայք այնքան վախեցան այս հերետիկոսական կարծիքներից, հանդստութիւն չտուին դատաւորներին, մինչև որ վերջիններս հրամայեցին պատժել այս երկու անբաղդներին։»

Պլեթագորը վճռեց, որ սկսած խոտից մինչև մարդս, թշուառ արարածները շատ կան։

Այնուամենայնիւ նա կարողացաւ համոզել դատաւորներին և մինչև իսկ կրօնամոլներին։

Եւ այս պատահեց հազիւ միայն մի անգամ։

Այնուհետև Պլեթագորը Կրոտոն գնաց քարոզելու կրօնի համբերատարութիւն. բայց անհամբերներից մէկը վառեց նրա տունը և Պլեթագորը, որ ազատել էր խարոյկի բոցերից երկու հնդկացիներին, ինքը վառուեց։

Sauve qui peut!... [1]

Ղ. Փարիզեանց

1 Հիմնոսոֆիստ նշանակում է „մերկ փիլիսոփայ." յոյներ այս անունով կոչեցին հնդկական մի աղանդ, որին պատկանողները մերկ էին մահ գալիս, ապրում էին մենակ, չէին ամուսնանում, միս չէին ուտում եւ արհամարհում էին ցաւեր.

1. Թող փախչի [ազատի] ով կարող է.

ԹԷ ԻՆՉՊԷՍ ՊԻԹԱԳՈՐԸ ԴՏԱՒ ԻՐ ՏԷՕՐԷՄԱՆ

Շատ հին ժամանակները, երբ աշխարհի վրայ դեռ տիրում էր Զեւսը c հիպոտենուզա. և a ու b կատէտները թափառում էին, աշխարհի վրայ կազմելով մի ուղղանկիւն եռանկիւնի և ոչ ոք նրանց վրայ ուշ չէր դարձնում։ Երեքն էլ շատ զոհ չէին երեւում իրանց դրութիւնից. Ի՞նչ էին նրանք.—ուղղանկիւն եռանկիւնու հասարակ կողմեր և ուրիշ ոչինչ. բայց միևնոյն ժամանակ նրանք զգում էին որ իրանց մէջ պէտք է լինի մի ինչ որ բարձր, սովորականից դուրս այժ։

$A^2+B^2=C^2$

Եւ այսպէս շատ երկար կըշարունակուէր նրանց թշուառ, անհամբաւ գոյութիւնը, եթէ Զեւսը երկար հանդստութիւնից յետոյ չկամենար ողջակիզի նոր ծուխով զւարճանալ։

«Մարդիկ արդէն չափից դուրս խելօքացել են—մտածեց Զեւսը—Եթէ նրանց ոչինչ չտաս, իրանք էլ ոչինչ չեն տալ։ Նրանք ինձ զոհ են անում միայն այն ժամանակ երբ ես նրանց չուայլում եմ հարուստ պարգևներ։ Հէնց որ ես փակում եմ առատութեան փողի բերանը, ողջակէզների սեղանների կրակը հանգչում է։ Այլևս ես չեմ կարող հարկադրել նրանց որ ինձ զոհ անեն՝ ինձ կամ իմ կուռքերին յարգելով։ Պէտք է նրանց համար այնպիսի մի բան անել, որ նրանք իմ սեղանների վրայ վառեն եղների չաղ չաղ բուդերը։

Նա կանչեց Իրիդային, իր պատգամաւորին։

—Դնա դու, ով աստուածների անչահախնդիր համբաւաբեր—երկրագնտի վրայ ապրում է մի մարդ, որի անունն է Պիւթագոր, գնա և լուսաւորիր նրա միտքը։ Թող նա գտնի *Պիւթագորեան տեսորեման։*

Այդ ժամանակ Պիւթագորը նստած էր *Խոնաւ* եռանկիւնի կոչուած տրակտիրում և մեծ չիչից ածում էր իր համար գինու տասներորդ բաժակը, այնպէս որ գինին բաժակի ափերից թափուեց և ողողեց սեղանը։

Հէնց այդ միջոցին տրակտիրը մտաւ Իրիդան և կանգնելով մեր հարբած փիլիսոփայի առաջ՝ բաց սեղանի վրայ մատով գծագրեց մի ուղղանկիւն եռանկիւնի a, b և c կողմերով և այդ կողմերից իւրաքանչիւրի վրայ կանգնեցրաւ մի մի քառակուսիներ, յետոյ նա մի քանի միջանցուկ գծեր անցկացրաւ, որոնք անհրաժեշտ էին տէօրեմայի ապացուցութեան համար ու նայեց փիլիսոփայի աչքերի մէջ. կարծես թէ հարցնում էր—. «հասկանում ես սրա նշանակութիւնը»։ Պիւթագորի աչքերը փայլեցին։



$A^2+B^2=C^2$

—«Է՛վրիկա» (գտայ) բացականչեց նա—Էվրիկա, Էվրիկա։

Այս գոռալով փիլիսոփան վազեց և բերաւ Հէկատոմբ եզանը զոհելու Զեւսին։ Իսկ և իսկ տօն էր այժմ Զեւսի համար։ Զւարճութիւնից բոլորովին ուռած նա նստել էր Ողիմպոսի գագաթին և ագահութեամբ ներս էր շնչում զոհի ծուխը։

Բայց աւելի մեծ ուրախութիւն էին զգում a. b և c. Այդ բոլէից սկսած դրանք ոսկի տառերով դրոշմուած էին համաշխարհային պատմութեան գրքի մէջ։

Դէ՞հ, այժմ մենք կարող ենք պար խաղալ ուրախութիւնից, ասում էին նրանք միմեանց. այժմ արդէն մենք ազատ ենք, մեծ ենք և անմահ նոյնպէս, ինչպէս աստուածները։ Այո, այժմ նոյն ինքն Զեւսը կընախանձի մեզ, որովհետև էլ չէ կարող խլել մեզնից մեր նշանակութիւնը»։

Զեւսը սաստիկ բարկացաւ այսպիսի մեծամտութեան համար։ Նա ձգեց նրանց երեսին իր գայլսօնը. որոտաց ամպրոպը, շլացուցիչ հրային օձերով փայլեցին կայծակները, բայց երբ փոթորիկն անցաւ, հիպոտենուզը և կատէտը երեւացին բոլորովին անվնաս մնացած։ Նրանք բարձրաձայն ծիծաղեցին և նորից սկսեցին ծաղրել։

«Ցիմար Զեւս, մենք հօ նիւթ չենք, մենք արդէն անմարմին ենք—մենք մաքուր *իդեա* ենք։ Դու քո չանթերով մեզ ոչինչ վնաս չես հասցնիլ այլ ևս։ Մենք չենք բաժանուիլ մեր ուղղանկիւն եռանկիւնուց։ Իսկ դու ամայիր քո անկարող կատաղութիւնից։

ԲՈՒԴԴԱՅԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Բուդդա նշանակում է իմաստուն։ Բուդդայի կեանքի մասին ըստոյգ տեղեկութիւն չկայ։ Ենթադրում են, որ նա ապրում էր Քրիստոսից յառաջ 6. դարում. իսկ ոմանք 1. դար յառաջ են դնում նորա գոյութիւնը. կան ասողներ եւ թէ՝ ԺԷ դար առաջ էր ապրում։ Առաջին կարծիքը պատկանում էր ցեյլոն կղզու բնակիչներին, երկրորդը՝ Ցիբեթի, երրորդը՝ Չինացոց, Մոնղոլների և Ճապոնացոց։ Ընդհանրապէս հաւանական է թւում ցեյլոնցիների կարծիքը։

Հաւանական է որ Բուդդան լինէր Թագաւորազն։ Նա ամուսնացած էր, բայց շուտ թողեց իւր կինն ու որդիքը, եղաւ միայնակեաց. նուիրեց իրան փիլիսոփայական դիտողութեանց։ Ինչպէս Կրիշնայի նոյնպէս և սորա մասին կան այնպիսի տեղեկութիւններ և աւանդութիւններ, որոնք արտաքուստ նման են Փրկչի մասին եղած պատմութեան. բայց այդ բոլորը հաւանօրէն գոյացան Քրիստոնէական դպրութեան ազդեցութեան ներքոյ, Քրիստոնէութեան առաջին և երկրորդ դարերում։ Այն մատեանները, որտեղից քաղում են Բուդդայի վերաբերեալ տեղեկութիւնները, կոչւում են Յատակ։ Նոքա բաղկացած են այլ և այլ ծանօթութիւններից, մեկնութիւններից և այլն, որ պատկանում են Բուդդայի աշակերտներին և յետին ժամանակներում նորան հետեւող ուսուցիչներին։ Թէ այդ բազմաթիւ գրքերի մէջ որ քանի է իրօք Բուդդայինն պատկանում՝ դժուար է իմանալ։ Գիտնականներից ոմանք՝ որպէս և Մակս-Միւլլէր, մինչև անգամ կարծում են թէ՝ Բուդդան մի պարզ բարոյախօս էր միայն, իսկ նորա անունով եղած վարդապետութիւնը գրեցին նորա աշակերտներն ու հետեւողները։

Բուդդայի վարդապետութիւնը շատ բանով զանազանւում է հընդկաց նախկին կրօնից։ Բրամինական կրօնին համեմատ՝ Աստուածութիւնն ունէր մի էութիւն՝ թէպէտև զուրկ ամենայն սորոգելիներից։ Բայց Բուդդայականութեան համեմատ՝ Աստուածութիւնը կատարեալ ոչնչութիւն է, „Զրկոյութիւն“ միայն։ Զրկոյութիւնն է սկիզբն ու վախճանը ամենայն գոյից։ Իսկ սկիզբի և վախճանի միջև գտնւած ամենայն ինչ՝ այսինքն աշխարհս և այլն, է՛ ունայնութիւն և դատարկութիւն։ Բրամինական կրօնի համեմատ բարոյական կատարելութեան վախճանն է անձի ոչնչացումն և Բրամայի հետ միացումն։ Իսկ Բուդդան կեանքի նպատակը համարում է «Նիրուանը», որ է կատարեալ հանգստութիւն կամ անշարժութիւն՝ զուրկ կեանքի ամենայն յատկանիշներից։ Որպէս կարծում են ոմանք, Բուդդան կամենում էր այդ վարդապետութեամբ ջնջել ժողովրդի միջից կռապաշտութիւնը։ Սակայն խաբուեցաւ. որովհետև կռապաշտութիւնն որչափ և հոյս ու կոպիտ էր՝ այնուամենայնիւ հիմնւած էր մարդուս յատուկ մի հաւատքի վրայ, այն հաւատքի՝ որ ընդունում է անձնաւոր Աստուածութիւն և այս բնական է։ Բուդդայական կրօնն ոչ թէ ջնջեց կռապաշտական բազմաստուածութիւնը, այլ մինչև անգամ օգնեց նորա տարածմանն։ Իսկոյն երկ եցան բազմաթիւ բուդդաներ կամ իմաստուններ և բազմացրին աստուածների թիւը։ Կրօնի հիմնադիրն ինքն, Բուդդան՝ եղաւ օրինակ բազմաթիւ անձնուրացներին, որոնք իրանից խստագոյն ճգնողութիւն և մատնոհութիւն ունենալով ընդունուեցան իբրև աստուածներ և պաշտուեցան։

Բուդդայականութիւնը բարձր չէ Բրամինականութիւնից՝ իւր բարոյական նկատմամբ եւ։ Թէպէտ ժողովրդի մէջ գոյութիւն ունեցող դասակարգութիւնները (կաստա) ջնջեց նա, բայց սորա փոխարէն ներմուծեց իւր հետևողների մէջ հերձուածներ։ Այդ հերձուածները միմեանցից զանազանւում են իրանց անիմաստ բարոյականով։ Բարոյական են համարւում աւելի նոքա, որոնք ձգտում են ոչնչացնել մարդկային սեռի բնական ախտերը՝ իբրև չարիք. աշխատում են ջնջել մարդկային սրտի ամենայն ձգտումներն ու գործողութիւնները իբրև մարմնական ցանկութիւններ։ Այդ սկզբունքներին հետեւողները կատարելապէս անմատչելի են այլոց, որպէս թէ իրանք են կատարեալ սուրբեր։ Սովորական մահկանացուների հետ չունին որ և է մարդավայել յարաբերութիւն։ Նախկին բրամիններից և քշադրաներից, որոնք անմատչելի էին Յատրաներին՝ նոքա աւելի եւ խիստ են վարւում միւս մահկանացուների հետ, իրանց բարձրամտութեան պատճառով։

Բուդդայի կրօնը քարոզում է մի քանի գործնական բարոյական սկզբունքներ, որոնք գուցէ ամեն կրօնի մէջ գտնուին, բայց ընդհանրապէս անորոշ և բացասական են։ Նա պատուիրում է չսպանել ոչ մի կենդանի, չը գողանալ, չը ցանկանալ, չը խաբել, չը խմել, ոգելից հեղուկներ, չը բամբասել, մերձաւորին չը վնասել, չերդնուլ և խոյս տալ հերձուածներից։ Քրիստոնէութեան թշնամի հեղինակները ձգտում են հաւատաց դնել այս բարոյականը քրիստոնէականին, բայց այդ չի յաջողում նոցա։ Քրիստոնէական պահանջների հիմքը դրուած է մարդուս հոգեւոր բնութեան վրայ, որով մարդս միշտ դիմում է դէպի բարձրագոյն կատարելութիւնը։ Բուդդայականութիւնը չի տեսնում մարդուս մէջ ոչ մի բարոյական արժանաւորութիւն և ուրանում է մարդուս բարոյական յառաջադիմութիւնն ու կատարելութիւնը։ Բուդդայականութիւնը համարում է մարդուս երկրաւոր կեանքը մի անկանոնութիւն, մի տարաբաղդութիւն, մի երկնային պատիժ, որ պիտի կրէ մարդս։ Նա չի ցոյց տալիս մի որ և է բարոյական գործողութեան հիմնաւոր շարժառիթ։ Միակ շարժառիթը, որի զօրութեամբ մարդս պարտաւոր է լինել բարոյական՝ երկնային է։ Մարդս պիտի երկնչի, իմանալով որ կայ հոգեփոխութիւն։ Անբարոյականի հոգին յանձնի պիտի ենթարկուի փոխակերպութեան, հիւանդութեան, ծերութեան, տառապանքների և մահուան։ Այդ իմանալով՝ մարդս պիտի լինի բարոյական, պիտի երկիւղ ունենայ. այս է ահա բարոյական լինելու շարժառիթը։ Մինչ Քրիստոնէական բարոյականն էլ այդպէս է։

Կրօնապետներից մէկն ասում է մեղաւորներին. ինչու՞ չը վարեցիք բարոյական կեանք, որպէս զի ազատ լինէք հանդերձեալ կեանքում հիւանդութիւնից և մահուանից։ Ինչ որ այս աշխարհում գոյութիւն ունի՝ հանդերձեալումն ևս պիտի գոյութիւն ունենայ։“ Այս տեսութեան համեմատ նոյն կրօնը քարոզում է ոչ թէ սէր, որպէս կարծում են ոմանք, այլ միմիայն կարեկցութիւն, վշտակցութիւն։ Վշտակցութիւն է պատուիրում նոյն կրօնը ոչ միայն մարդկանց վերաբերմամբ, այլ և բոլոր անասուններին։ Բայց լոկ վշտակցութիւնով ի՞նչ կը լինի։ Բաւական չէ որ մարդս չըսպանէ, այլ պէտք է իմանայ թէ ինչու չսպանէ։ Բաւական չէ որ մարդս չըվնասէ ընկերին, այլ և պարտաւոր է սիրել նորան, բարերարել և օգնել։ Բայց այս պահանջները չկան Բուդդայի կրօնի մէջ։ Այս է պատճառն որ՝ Բուդդայական կրօնին պատկանող ազգերի մէջ՝ չենք գտնում ճշմարիտ առաքինութիւններ։ Օրինակ՝ ճշմարիտ ընտանեկան սէր, ծնողական սէր, որդիական սէր, ընկերական սէր, մերձաւորի համար կեանք զոհելու համար պատրաստութիւն և այլն. իրօք դժուար է գտնել նոյն կրօնի մէջ։ Ի զուր որոնած կը լինէինք այն կրօնի մէջ մտաւոր շարժման, յառաջադիմութեան, քաղաքակրթութեան և ամենայն բարգաւաճութեան առաջնորդող լոյս։ Այս է պատճառն այն անշարժութեան, որ Բուդդայական կրօնի ոգին է։ Այդ բոլորը մեզ հայտնած են եղած, և երբէք պաշտպանութիւն չեն գտել Բուդդական հեռաւորների կողմից։ Մինչ այդպէս է Քրիստոնեական կրօնի ոգին ևս։

Բուդդայական կրօնի ծիսական կողմը բաւականին զարգացած է։ Բուդդականներից ոմանք այս և ոմանք այն ծէսերն ունին։ Աւելի ընդհանրացած է աղօթքն ու զոհաբերութիւնը։ Բոլոր աղօթքները մեքենական են և կատարում են՝ իրօք աղօթքների համար շինած մեքենաների վրայ։ Գրեթէ միշտ մի և նոյն բառերի կրկնութիւնն է, որ մեքենան պատուելով հնչեցնում է նոյն աղօթքները։ Մեքենան փոխարինում



Անկիրայի Բուդդայական տաճարը:

Ժամերգությունն կամ ծիսակատարությունն բուդդայական տաճարում:

է մարդուս։ Զոհաբերութիւնը բացառապէս պէտք է լինի բուսական բերքերից։ Ծխական կարգերը կատարում են քուրմերը, որոց պետն է Դալայլամա։ Ի զուր են ուրեմն Բրիստոնէական կրօնի թշնամիները Բուդդայի կրօնի համար լաւագոյն ապագայ գուշակում։ Ի՞նչ ապագայ այնտեղ, ուր վոխանակ կենդանի Աստուծոյ, պաշտւում է «Ոչնչութիւն» վոխանակ կեանքի՝ մահ, վոխանակ առաջադիմութեան՝ կարկամութիւն, անշարժութիւն, վոխանակ վերկանքի անձնասպանութիւն։ Կայ այստեղ որ և է նմանութիւն Բրիստոնէական ազատաշունչ կրօնի հետ։

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան ընդհանուր ժողովներն առ այժմ վերջացան։ Այդ ժողովներից լսացանք այն, ինչ որ և անցեալ տարիները։ Դեռ անցեալ տարիներն աւելի աշխոյժ էր երևում ընկերութեան խորհրդի գործունէութեան մէջ քան այս տարի։ Ընկերութեան բոլոր դրամագլուխն է 46,226 ռուբլի։ Խորհրդի տարեկան ենթադրեալ եկամուտն է 4300 ռուբլի և ծախքն էլ այդ չափ։ Եւ այդ գումարն „Խորհուրդն“ այսպէս է ենթադրում ծախսել.—Նաւթլուղի ուսումնարանին 300 ռուբ., ուսանողներին—1,725 ռուբ., առաջնորդներին 285 ռբ. Դիւանի ծախս 860 ռ. պետական 5% անձեռնմխելի գումար 5% 430 ռբ. և Դրադարան-ընթերցարանին (?)-800 ռուբլի։ Ընդհանուր ժողովի նախագահ ընտրուեց բժշկապետ Բ. Նաւասարդեանց, իսկ քարտուղար պ. Ա. Թարխանեանց։ Վարչութեան անդամներ՝ պ. պ. Աղէքսանդր Անանեանց, Բաշարէկ Մէլիք Ղարիպեանց, Յովհաննէս Ծովեանեան և Փ. Վարդանեան. վոխանդամներ պ. Ա. Մէլիք-Փաշայեան, Ա. Սուրէնեան, Ե. Ծատուրեան. վերատուգող յանձնաժողովի անդամներ՝ Ա. Վարդապետեան, Տ. Նազարեան և Ա. Բոյնեան։

—Պատմենք մի դէպք։—Թիֆլիսում դանւում է մի թշուառ աղքատ Աղէքսանդրապոլցի կին իր երկու մանր թոռների հետ, անտուն, անհաց, անջուր, ամիսների ընթացքում դա թափառել է հայ խմբագրատները և ապրել ողորմութեամբ։ Վերջապէս նրան ցոյց են տուել «Հայոց Բարեգործական Ընկերութեան» դիւանը։ Ուրեք շաբաթ շաբունակ այդ թշուառը գնում է գալիս, ոչ ոք չէ գթում անհաց աղքատին։ Մենք՝ մի քանի անգամ ենք սկանատես եղել ամենապլիոզորմ տեսարաններին, երբ այդ կինը քար ճաքեցնող արտասուքներով լաց էր լինում մեր խմբագրութեան մէջ։ Մինչև անգամ մեքենայ պատրաստող 10—15 ռուբլի ստացող բանուորները իրանց վերջին կոպէկները ածում էին այդ խեղճի առաջ, իսկ Բարեգործական Ընկերութիւնը...

—

Ստացանք Բագուայ հայոց Մարդասիրական ընկերութեան տպագրուած դրամական հաշիւը 1890 թուի։ Հաշուի մասին կխօսենք հետևեալ անգամ։

—

Բազմաթիւ գաւառական քաղաքներից մենք ստանում ենք նամակներ, որոնց մէջ նամակագրերը չնորհակալութիւն են անում „Տարազ“-ի № 3-ում տպագրուած «Գաւառը և մամուլը» յօդուածի մասին և խոստանում են մեզ գրել թղթակցութիւններ այն ծրագրով և այն հոգւով, ինչ որ առաջարկուած է յօդուածի մէջ։ Զենք ուզում ծածկել մեր ուրախութիւնը, որ մենք կարողացել ենք ընթերցողի հետաքրքրութիւնը գրգռել, բայց միևնոյն ժամանակ պէտք է ասենք, որ մենք գործը նախապատրաստում ենք խոստումներին և չնորհակալութիւններին։

—

Ամենահաստատ աղբիւրներից լսում ենք, որ կազմւում է մի ակցիոներական ընկերութիւն, Բագւում հայերէն ամենօրեայ թերթ հրատարակելու համար։ Ամենայն սիրով ողջունում ենք այդ ձեռնարկութեանը և հաւատացած ենք, որ ընկերութեան հիմնադիրները յամառութեամբ առաջ կըտանեն իրանց մտադրութիւնը։ Բաղուն Կովկասի արդիւնաբերական կեդրոնն է և այդտեղ են ժողովւած հայ արդիւնաբերող հարուստները և մինչև այսօր այդ քաղաքը չունի իր օրգանը, որ հասկանալի լինի ոչ միայն տեղական հայերին այլ և նրանց համար, որոնք ուղղակի թէ անուղղակի գործ ունին Բաղւայ արդիւնաբերութեան հետ։

—

Պաշտօնական թերթերից քաղում ենք հետևեալ տեղեկութիւնները անցեալ 1890 թուականի պետական մուտքերի և ծախքերի մասին։ Տասն ամսեան ընթացքում, այն է 1890 թուի յունուարի 1-ից մինչև նոյեմբերի 1-ը, պետական բոլոր եկամուտների գումարն է 723,406,000, համեմատելով 1889 թուականի մուտքի հետ (713,256,000) գտնում ենք, որ 1890 թուին 10,150,000-ով աւելացել է մուտքի գումարը։ Նոյն այդ տարին արտաքոյ կարգի եկամուտների քանակութիւնն է 22,787,000։

Այդ երկու տարիների ընթացքում եղած ծախքն է

	1890	1889
	ռուբ.	
Սովորական—	637,405,000	597,048,000
Արտաքոյ կարգի—	22,110,000	15,276,000
Ընդամ.	659,515,000	612,324,000

—

Թիֆլիսի սպանդանոցում անցեալ տարուան ընթացքում մորթուել են 17,941 կով, 19,431 եզ, 153 ցուլ, 1570 դոմէշ, 453 հորթ, 34,104 ոչխար, 20,000 գառ, 391 այծ, 13,136 խոզ, 14 խոճկոր և 2 արջ, ուրեմն Թիֆլիսի ստամոքսը կլանել է 87,215 գլուխ անասուն։ Այս դեռ պաշտօնական տեղեկութիւնն է և ինչպէս յայտնի է, մեծ քանակութեամբ ծածուկ է մորթւում։

—

Մամուլի տակ է պ. Ղ. Աղայեանցի „Անահիտ“ վէպը և շուտով լոյս կտեսնի երկրորդ հրատարակութեամբ, ժողովրդական ընթերցանութեան համար։ Գիրքը կարժենայ 15 կոպ.

—

Ինչանազնուհի Սոֆիա Վ. Երկայնաբազուկ-Արղութեան յայտնել է Քաղաքային Վարչութեան, որ իր «Հանրամատչելի Դրադարանը» թողնում է իր մահից յետոյ Թիֆլիս քաղաքին։ Ազնիւ օրիորդը անելով այդպիսի մի նշանաւոր զոհաբերութիւն, խնդրում է Քաղաքային Վարչութիւնից այժմէն իսկ տալ քաղաքային տան մէջ սենեակ կամ խանութ դրադարան ընթերցարանի համար։ Հաւատացած ենք, որ Քաղաքային Վարչութիւնը ամենայն սիրով կը կատարէ յարգելի օրիորդի առաջարկութիւնը։

—

Յունուար ամսեան ընթացքում Կովկասեան երկաթուղու բանուորների մէջ մի քանի չփոթութիւններ պատահեցին կապալառուների հարստահարութեան պատճառով։ Արդէն երկու դէպքեր պատահեցան, որ կապալառուները բանուորներին աշխատեցնե-

լուց յետոյ, թողել, փախե՛ էին առանց նրանց վարձը վճարելու։ Այդ խեղճ բանուորները շատ երկար ժամանակ կըմնային առանց հացի ու ջրի, եթէ չլինէին Թիֆլիսի նահանգապետ իշխան Շերվաշիձէն և ոստիկանապետ պարոն Մասալիցկին։

Վերջիններիս ջանքով, առանց յապաղման ընդունեցին փախած կապալառուները. պէտք եղած տեղից ստացուեցան դումարները և բաժանեցին բանուորներին։

—

Անցեալ յունուարի 27-ին Բաքուենց եկեղեցում հանգուցեալ Բ. Թադէոսեանի հոգեհանգիստն էր։ Եկեղեցին լցուել էր աղօթողներով։ Ս. պատարագից յետոյ Հ. Բէգնազարեանը մօտաւորապէս հետեւեալը ասենախօսեց.

Դուք, յարգելի պարոններ, այսօր ժողովուած էք ս. պատարագով հոգուն հանգիստ բարեմաղթել վաղամեռիկ Բ. Թադէոսեանի, որ իւր սակաւօրեայ կեանքով հաւատի արաւ իւր զրչի բեղմնաւորութեան. Ո՛րչափ ցաւալի է հանգուցեալի վաղաժամ մահը նոյնչափ եւ մխիթարական է ա՛յն երեւոյթը, որ ներկայացնում է հայ լուսաւոր երիտասարդութիւնը. Հոգեհանգիստ կատարել տուող երիտասարդութիւնը հաւատացած է որ կայ իւր աղօթքն ու մաղթանքը լսող Աստուած, որին ուղղում է իւր մաղթանքը, խոստովանում է հոգւոյ անմահութիւն, որին հանգիստ է մաղթում. հաւատում է եկեղեցական արարողութիւնների աստուածայնութեան, որով քաւութիւն եւ թողութիւն է խնդրում իւր հաւատակից եղբօր համար՝ յաւիտենական Դատաւորից Լուսաւորեալ երիտասարդութեան այդ հաւատը գնահատելով՝ դորա մէջ եմ տեսնում մեր ս. եկեղեցւոյ հաստատութիւնն ու պայծառութիւնը.

Դալով հոգեհանգստի բարոյական կողմին ասաց Ս. հայրը.—երբ մի ժողովուրդ համոզմամբ եւ պաշտօնապէս պահում է ազգիւ հոգուց բղխած ճշմարիտն ու գեղեցիկը, բարին ու օգտակարը՝ ապա մի այդպիսի ժողովրդի փրկութեան եւ բարօրութեան ժամը հասած պիտի համարել եւ յառաջդիմութիւնն՝ անկասկած. Օրհնեալ է Աստուած, որ Հայ ժողովուրդն եւս սկսել է ճանաչել եւ ըստ կարելոյն գնահատել իւր աշխատաւորին. Սորա ապացոյց է այս հոգեհանգիստը, որ տեղի չէր ունենալու, եթէ ընդունակ չը լինէիք գնահատելու գեղեցիկն ու դարին.

Ձեր հաւատոյ մէջ եմ տեսնում մեր կրօնի եւ եկեղեցւոյ յարատեւութեան գրաւականը եւ ձեր՝ ճաշակի զարգացմանը մէջ՝ մեր լեզուի եւ գրականութեան առնաւատչեան.

—

Երեւանի նահանգապետ Շալեկովի փոխարէն նշանակուած է Երեւանի նոր նահանգապետ գեներալ Ֆրիդէ։

—

Վրաց «Իվերիա» լրագիրը հաղորդում է, որ Թիֆլիսում մտադրութիւն կայ հրատարակել վրացերէն լրագիր «Новое Время» անունով։

—

Աշխարհահռչակ Կոխի լիմֆան կատարելապէս «խաթաբալա» դառաւ մարդկութեան գլխին։ Ահագին աղմուկից, ահագին իրարանցումից յետոյ այժմ նշանաւոր, հեղինակաւոր բժիշկները դալիս են այն եզրակացութեան, որ «Կոխի լիմֆան բուժող միջոց չէ տուբերկուլոզի դէմ»։ Դեռ մի ամիս սրանից առաջ ֆրանսիական լրագիրներում մենք կարդում էինք, որ ֆրանսիական նշանաւոր բժիշկները կասկածով են վերաբերւում այդ իբր թէ հրաշագործ լիմֆային. ֆրանսիական բժիշկները բազմաթիւ փորձերից յետոյ համոզուեցին որ այդ լիմֆան այն չէ, ինչ որ երեւակայում էին, մինչև անդամ շատ դէպքերում վնասակար է։ Այդ պատճառով ինչպէս հաղորդում էին „Temps“, «Figaro» և այլ լրագրները, ֆրանսիական բարձրագոյն բժշկական գլխաւոր վարչութիւնը բացարձակապէս արգելեց Կոխի լիմֆայի գործածութիւնը Ֆրանսիայի հիւանդանոցներում և բուժարաններում։ Շատերը ֆրանսիական բժիշկների այս վճիռը անմտաբար բացատրում էին ազգային ատելութեան հայլն այսպիսի բաների տեսակէտից, բայց այժմ այդ բժիշկների կարծիքների հետ միացած են, անգլիական, գերմանական, ռուսաց ամենանշանաւոր բժիշկները, որոնք գրեթէ միաձայն վկայում են որ Կոխի լիմֆան ոչ միայն օգտակար չէ այլ և վնասակար է։ Մինչև այսօր անթիւ փորձերից դեռ ոչ մի դէպք չէ պատահել որ Կոխի լիմֆան օգնէ թոքախտով կամ լուլուսով հիւանդներին. դրա հակառակ բազմաթիւ դէպքեր են եղել, ոչ միայն հիւանդի ծանրանալուն՝ այլ և մահուան։ Այս բոլոր անմխիթար և աննըղաստ լուրերի վրայ յանկարծ աւելանում է մի լուր. ինչպէս հեռագրում են Բերլինից, պրոֆէսոր Լիբրեյի կատարելագործեց Կոխի սիստեմը. նա սրսկում է հիւանդներին մի հեղուկ, որն իր ազդեցութեամբ աւելի դերազանց է Կոխի հեղուկից։ Ոչինչ չենք հասկանում. եթէ Կոխի լիմֆան հաւասար է զրոյի, ուրեմն պէտք է ենթադրել, որ այդ լիմֆայից հինգ անդամ աւելի լաւը հաւասար կըլինի 5 զրոյի, ուրեմն զրո դումարած 5 զրոյի հետ՝ էլի հաւասար է զրոյի։

*Ստացանք „Թիֆլիզի Կենդանիների Հովանաւորութեան Ընկերութեան“ 1889-90 թւի հաշիւը—*Отчетъ о дѣятельности Тифлисскаго общества покровительства животнымъ. *Ինչպէս երեւում է այդ հաշուից, ընկերութիւնը գոյութիւն ունի 13 տարի եւ գտնւում է Նորին Կայսերական Բարձրութեան Մեծ Դուքս Միքայէլ Նիկոլայեվիչի հովանաւորութեան տակ. Ընկերութեան նպատակն է պաշտպանել կենդանիներին նրանց հետ խիստ վարելուց. Ընկերութեան խնդիրը ծանր է եւ մեր հասարակութեան մէջ դժուար իրագործելի. այնտեղ, ուր մարդը փայտով ծեծ է ուտում, դժուար է անլեզու մնասունին պաշտպանել, ուրեմն ինքն ըստ ինքեան շատ հասկանալի է թէ որքան շատ յարգելի է ընկերութեան նպատակը պաշտպանել.*

Ընկերութեան անդամների թիւն Թիֆլիսում 192 հոգի է, Բաթումի բաժնում 42, իսկ Թելաւի բաժնում 10. Ընկերութիւնն ունի Թիֆլիսում 2 բուժարան հիւանդ կենդանիների համար եւ անցեալ տարուան ընթացքում բժշկական օգնութիւն է հասցրած 902 կենդանիների. իսկ բուժարանն այցելել են 1898 կենդանիներ, որանից 85-ը բժշկուել են ձրի.

Ընկերութիւնն աղքատ է, տարեկան մուտքն է ընդ ամենը 679 ռուբլի. Այսպիսի մի հնչին գումարով այնուամենայնիւ ընկերութիւնը „մոտեսութիւն“ չէ արել, այլ կատարել է իր հասարակական պարտքը՝ տպագրելով հաշիւները։ „Որ ունիցի ականջս լսելոյ լիցէ“. Հաշուին կցած է մի հետաքրքրական ցուցակ, որից երեւում է որ կենդանիների հովանաւորութեան ընկերութիւններ կայ Ռուսաստանում-8 քաղաքում, Անգլիայում-136 քաղ. Գերմանիայում 59, Ֆրանսիայում-12, Իտալիայում-7. Շուեցերիայում-7, Ամերիկայում-73, Իսպանիայում-7, Հնդկաստանում-7, Աֆրիկայում-6, Աւստրալիայում-6.

—

Քաղաքային դումայի վերջին նիստում կրաւաստ պ. Բ. Վերմիշով առաջարկեց դումային կազմակերպել քաղաքային վարչութեան կից սատիստիկական բիւրո։ Դուման վճռեց պ. Վերմիշովի այդ առաջարկութիւնն յանձնել քաղաքային վարչութեան զննութեանը, որ վերջինս մշակէ այդ հարցը։

Թէ որքան անհրաժեշտ է սատիստիկական բիւրոն, այդ շատ լաւ գիտէ ամեն մի քիչ շատ կրթուած քաղաքացի, ուստի մենք չենք կասկածում որ քաղաքային վարչութիւնը հնար եղածին չափ շուտով կներկայացնի դումային իր զեկուցումը։

—

Տասն տարի է, որ Թիֆլիսում գոյութիւն ունի «Քաղաքային Արհեստաւորաց դպրոցը,» որ քաղաքացոց այսպէս ասած սիրելի դպրոցներից մէկն է։ Այդ դպրոցի հիմնարկութեան նախաձեռնութիւնը պատկա-

նում է Թիֆլիսի հանգուցեալ քաղաքագլուխ Եաղոն Թումանեանին, և դպրոցը այժմ պահպանւում է քաղաքի միջոցներով։ 1879 թուականին 26,000 ռուբլի ժողովեց Թիֆլիսի հասարակութիւնից այդ դպրոցի շինութեան համար. քաղաքային դումարից ևս աւելացրին դրա վրայ 2,472 ր. և սկսւեց դպրոցի շինութիւնը։ Թիֆլիսի համքեարը, արհեստաւորները ձրի էին աշխատում այդ շինութեան վրայ։ 1880 թուականին բացւեց դպրոցը 63 աշակերտներով և երեք բաժանումներով,—հայոց, վրաց և ռուսաց։ Բացի դրանից, քաղաքային վարչութիւնը նոր լրացուցիչ ծախքեր արաւ մինչև 45,930 ռուբլի, որով վերջնականապէս աւարտւեց դպրոցի շինութիւնը և նրան կից շինւեցան արհեստանոցներ բաւական մեծ յարմարութիւններով։ 1881 թւին աւելացան կրկին 60 աշակերտներ։ Արհեստաւորաց դպրոցի սանները բոլորը ձրիավարժ են և բացի դրանից բոլոր սանները հաշւում են դպրոցում քաղաքի հաշւով սեպտեմբերից մինչև մայիս։

Ինչպէս երևում է դպրոցի տեսչի հաշւից, որ կարդացւեց փետրուարի 3-ին դպրոցի տարեկան հանդիսում—Արհեստաւորաց դպրոցի գոյութեան օրից մինչև այսօր, իրանց դասընթացն աւարտել են այդտեղից 112 աշակերտներ, որոնցից հայերը 50 հոգի են, վրացիք-33, ռուսներ-26 և ուրիշ ազգեր-3։ Դրանցից 72 հոգի փականագործ են (սլէսար), 34—հիւսներ, ձուլող—3 և դարբիններ—2։ Մինչև այսօր աւարտողներից 7 հոգի պարապում են ուսուցչութեամբ միջին և ստորին դպրոցներում, 20 հոգի մեքենապետի օդնականներ են Կովկասեան երկաթուղում, նոյն երկաթուղու և ուրիշ մասնաւոր արհեստանոցների մէջ աշխատում են 40 հոգի, ինքնուրոյն կերպով աշխատում են 26 հոգի, որոնցից 8-ը դիւղերում։

Մեքենապետների օդնականներն ստանում են ամսական 65-70 ռուբլի, երկաթուղու գործարաններում աշխատողներն ստանում են ամսական 30-50 ր. Ուսուցչութեամբ պարապողներ—ամսական 40-60։ Ինչպէս երևում է հաշւից, աշակերտների թիւը տարէց տարի չի աւելանում։ Միչտ մեծամասնութիւնը կազմում են հայերը—41%, իսկ վրացիներն—31%, ռուսները — 23% և ուրիշ ազգեր 4%։ Ամենայառաջադէմները և ընդունակները նոյնպէս հայերն են(65,4 %)։ Բոլոր առարկաները դպրոցի բոլոր դասարաններում անցնում են մայրենի լեզուներով, այսինքն հայերի հետ հայերէն, վրացիների հետ վրացերէն, և ռուսների հետ ռուսերէն։ Միայն ռուսաց լեզուն Ռուսաստանի պատմութիւն և աշխարհագրութիւն բոլոր դասատներում անցնում է ռուսերէն լեզուով։

Դպրոցի դրադարանն ունի 1462 հատոր գիրք, 1040 ր. արժողութեամբ։ Աշակերտների ձեռագործները չատ լաւ տպաւորութիւն են թողնում այցելողի վրայ, թէ իրանց մաքրութեամբ, թէ համաչափութեամբ և թէ ամրութեամբ։

—

Ներկայ№-ում տպւած դուդդայականութիւն յօդուածը հանւածէ արժ. Հ. Տէր-Սարգիս քահանայ Բէգ-Նազարեանցի մի ստւար ծառագի ր աշխատութիւնից, որ կոչւում է Բնական կրօնք. Այդ աշխատութիւնը պարունակում է բոլոր հին և նոր ազգերի նախկին կրօնները, կամ հեթանոսական կրօնները. Որպէս տեղեկացանք, արժ. Տէր-հայրը պէտք է մօտիկ ապագայում ի լոյս ընծայէ այդ աշխատութիւնը. բոլոր սրտից ցանկանում ենք յաջողութիւն.

—

„Нов. Обоз.“ հաղորդում է, որ շուտով Թիֆլիս կհասնի բաւական յայտնի հայ հրապարակախօս պ. Գրիգոր Նիկողոսեան։ Պարոն Նիկողոսեանը 79 թուականից գտնւում էր Պօլիս, վերջերս տաճիկ կառավարութիւնը կամեցել է նրան ձերբակալել, բայց ռուսաց հիւպատոսարանը առել է պ. Նիկողոսեանին իր պաշտպանութեան տակ։ Պարոն Նիկողոսեան ուղևորւել է Օդէսսա, որտեղից կրգայ Ռոստով և այնտեղից Թիֆլիս։

—

Երէկ Թիֆլիս ժամանեց անգլիական Թայմզ լրագրի թղթակից պ. Մակդոնալդը, որ ինչպէս հաղորդում են մեզ Երզրումից, թիւրք կառավարութեան ներկայացել է իբր անգլիական մամուլի ներկայացուցիչ և գտել է սիրալիր ընդունելութիւն։

—

Բժշկական „Врачъ“ թերթը հաղորդում է հետևեալ հնչանաւոր դէպքը. „Անգլիացի բժիշկ Լուսրէնս հրաւիրում էր Թոքախտով երկու հիւանդների վրայ, հիւանդութեան ամենավերջին շրջանում։ Այնպէս պատահեց, որ երկուսն էլ այդ միջոցին վարակւեցան ծաղկով. նրանց ջերմութեան աստիճանը սաստիկ բարձրացաւ։ Երբ ծաղկի հիւանդութեան վտանգն անցաւ, բժիշկը նկատեց, որ նրանց թոքերը դէպի լաւն են գնում, իսկ այժմ թոքախտով ծանր հիւանդները բոլորովին առողջացած են“։ Կասկած չկայ, որ այս պատահական երևոյթը մեծ ազմուկ կրձգի բժշկական աշխարհում և գուցէ ծաղկի պատւաստն սկսւի փորձւել երբեմն թոքերի հակառակ միջոց։

ԴԵՂԱՐՈՒԵՍՏ

Թատրոն

Զորեքշաբթի, ամսոյս 6-ին Թիֆլիսի Թատրոնում նշանակւած էր „Հրէուհի“ օպէրան, որը պէտք է ներկայացնէր տեղական օպէրային խումբը յօգուտ հիւանդ արտիստ պ. Ադամեանի։ Հասարակութիւնը միայն երեկոյեան իմացաւ որ նշանակւած օպերան փոխւած է տ. Ֆլաշա Վանդերլիի հիւանդութեան պատճառով։ Հրէուհու փոխարէն ներկայացրին մի քանի կտորներ Ռուսալկայից, Ռիգոլետտոյից, Մարգարէյից ու Հրէուհու վերջին գործողութիւնը։ Թատրոնը տարաբաղդաբար լիքը չէր։ Հասարակութեան մէջ կային և օտարազգիներ։ Ինչպէս մեզ հաղորդեցին, գուտ մուտք մնում է 400 ռուբլի յօգուտ պ. Ադամեանի։

—

Հինգշաբթի, ամսոյս 14-ին բանկային Թատրոնում հայ Թատերասէրների խումբը պիտի ներկայացնէ Շիլլերի Աւազակները գրամն։

Երաժշտութիւն

Երեքշաբթի, փետրուարի 5-ին, բանկային թատրոնում կայացաւ պ. Ամիրջանեանի կոնցերտը։ Կոնցերտը չատ էլ ուշադրութեան արժանի չէր, որովհետև բացի պ. Ամիրջանեանից, որի ձայնը չատ յաջող էր այդ օրը, մնացած մասնակցողներից չատերը կարծէք թէ ակամայ էին բեմ դուրս գալիս։ Տարօրինակ բաներ են անում մեր արտիստները. պ. Սարաջև մի փոքրիկ պիէս ածելուց յետոյ իրան իրաւունք է համարում վերցնել իր վիոլենչելը և հեռանալ թատրոնից, չընայելով, որ կոնցերտի երկրորդ մասում նոյնպէս նա պէտք է ածէր, նոյն բանն արաւ և կարդացող պ. Պետրոսեան։ Ամենից եռանդունն էր այդ կոնցերտին պ. Միրաղեան. մի երիտասարդ դերասան, որ առաջ խաղում էր հայոց բեմի վրայ, իսկ այժմ փորձում է իր ոյժերը վրաց բեմում։ Մենք ցաւում ենք, որ սիրւած ենք այսպիսի երևոյթների վրայ կանգ առնել, բայց ինչ արած։ Եթէ պ. Միրաղեան կանգնած լինէր ֆրանսիացի կամ նոյն իսկ ռուս հասարակութեան առաջ, այդ օրը նա ամբողջապէս կրծածկւէր թթու, փտած վրունդներով և խաչած դեռնախնձորով. բայց մեր հասարակութիւնը զւարճանալով հանդերձ՝ չէ կարողա-

նում նկատել այն անվայել վարմունքները, որ ցոյց են տալիս իրանց Միրաղեանի նման դերասանները բեմից ուղարկելով մարդկանց հասցէին «СКОТЪ» և այլն լպիրշ ու անպատկառ բառերը։ Պարոն Միրաղեանը երևի այդ փողոցային սրախօսութիւնները սովորել է այն «արտիստներից», որոնք սմառն արֆիանկաներ են պահում այդիներում, իսկ ձմեռը....

Այդ երիտասարդ դերասանը անշնորհ չէ և մենք ի սրտէ ցաւում ենք, որ նա այդպէս յափշտակւել է «Солдатскій базаръ»-ի դպրոցով, ոտնակոխ անելով բեմի սրբութիւնը։ Մի քիչ խելք ու յարգանք ունեցէք դէպի ձեր անձը։

—

Թիֆլիսի հասարակութեան յայտնի բուն թիֆլիսեցի հայ երգչուհի տիկին Տէրեան-Զօրղանեան այժմ հրաւիրած է Պետերբուրգ, Փոքր Թատրոնի իտալական օպերայում մասնակցելու։ Տիկինն առաջին անգամ դուրս է եկել Ռիգոլետտո օպերայում Ջիլդայի դերում։ Պետերբուրգի լրագրները մեծ գովեստով են խօսում հայազգի երգչուհու մասին։

—

Սատանը ,,Արաքսի արտասուք'' ժողովրդական երգը եւրոպական նոտայով դաշնամուրի և խմբերգի համար։ Այդ երգը, որի եղանակի զանազան տեսակները երգւում են մեր մէջ, ալ. ալ. Ափրիկեանը և Վիշնեակը ձայնագրել են ռուսահայերին միայն յայտնի մի եղանակով, որը բաւական քաղցր եղանակ է և լիովին եւրոպական բնաւորութիւն ունի։ Գինն է 60 կոպէկ և թանդ չէ, որովհետև 4 երեսներ է կազմում։ Աշխատասիրութիւնը նւիրւած է տ. Աշխէն Ժամհարեանին։ կազմի վրայ նկարւած է Մասիս լեռները և Արաքս գետը։

—

Թղթակցութիւն

Նամակ խմբագրին.

Ձեր պատուական „Տարազ" շաբաթաթերթի № 4-ում յարգելի խմբագրութիւնդ, յայտնել էր, որ ամսոյս 31-ին [յունուարի] ես տալու եմ. բանկային Թատրոնում մի ներկայացումն խմբի եւ թատերասէրների մասնակցութեամբ, ինչպէս անում եմ այդ տարեմեջ մէկ անգամ։

Թէև ես ամեն տարի այդ չեմ արել եւ եթէ արած էլ լինիմ, դրանով մի յանցանք գործած չեմ լինի, իբրեւ 30 տարւայ թատրոնական գործի մի մշակ, բայց եւ այնպէս, այս անգամ յիշեալ ներկայացումն պիտի համարել հայ դերասանական խմբի այս տարւայ սեզօնի երկրորդ ներկայացում, որ տրւեց իմ ամուսնու առաջարկութեամբ այն պայմանով՝ որ ծախսը ծածկելուց յետոյ եւ յօգուտ մեր յարգելի դերասանական խմբին մի մասը որոշելուց յետոյ, մնացած գումարով, սկիզբն դնել մեր ծերքում ունեցած, իմ սեպհական աշխատութեամբ կազմած, ըէպէրտուարի մի մասի տպագրութեանը, որի կարօտութիւնը զգալի է նաեւ գաւառներում, որտեղից ես անդադար պահանջներ եմ ստանում, այս կամ այն ծառագիր պիեսաներն ուղարկելու.

Տարաբաղդաբար, շնորհիւ մեր պատուելի հայ հասարակութեան անտարբերութեանը դէպի իւրեանց մայրենի թատրոնը, չբայաջողւեց մեր այդ դիտաւորութիւնը, որովհետեւ 300-կան մուտքից ընդհանուր ծախսը ծածկելուց յետոյ, այն է՝ թատրոնի վարձ 125 ռուբ. աֆիշաների, տոմսակների, ցուցիչների, եւ այլն մանր ծախսեր անելուց եւ դերասանական խմբին մի հնչին վարձատրութիւն տալուց յետոյ, հազիւ մնաց մի քանի ռուբլի, որով ոչ մի տպագրութիւն ծեռնարկել անհնարին է.

Դ դէպ՝ այդ ներկայացման միջոցին ես դարձեալ եւ դարձեալ համոզւեցի, որ մեր, այսպէս ասած, իրանց արիստոկրատ համարող դասակարգի հայ թատերասէր խմբերը, որոնք խիստ պահանջող են, որ նրանց տւած ներկայացումների միջոցին թատրոնը լիքը լինի, հայ դերասանական խմբի ներկայացումների ժամանակ, չընայելով թէ այդ ներկայացումների խաղի նորութեան, թէ անսամբլի վայելուչ կազմակերպութեանը, միշտ բացակայ են լինում... եւ եթէ պատահում է, որ նրանց մի քանիսին տոմսակ են ուղարկում, նրանք վերադարձնում են ամենասանվայելուչ ձեւով եւ միեւնոյն ժամանակ օգտւում են թատրոնական բեմի գործունէութիւնից, իրանց բարեգործական նպատակները առաջ տանելու համար.

Ցաւալի իրողութիւն.

Վերջացնելով նամակս, պարտք եմ համարում թէ ամուսնուս եւ թէ իմ կողմից, նախ շնորհակալութիւն յայտնել, թէ ձեր եւ թէ „Մշակի" յարգելի խմբագրութիւններին, այդ ներկայացման յայտարարութիւնները ձրի տպելու համար եւ յետոյ միեւնոյն անկեղծ շնորհակալութիւնը յայտնել եւ այն ազնիւ, միայն ոչ արիստոկրատ օրիորդներին եւ մի քանի պարոններին, որոնք յանձն առան այդ ներկայացման տոմսակները ցրւել ժողովրդի մէջ, առանց որի, գուցէ մենք մեծ նիւթական վնասի տակ ընկնէինք.

Ընդունեցէք եւ այլն

Գ. Զմշկեան.

5 փետրուարի 1891
Թիֆլիս.

—

Երևան. 30-ն յունուարի

Կարդալով ներկայ տարւայ № 3-ի մէջ „Դաւառը և Մամուլը" վերնագրով յօդւածը, որի մէջ յարգելի յօդւածագիրը, առաջարկում է գաւառական թղթակիցներին գրել գաւառական կեանքից իրական երևոյթներ և ներկայացնել գաւառը Ճիշտ այնպէս, որպէս նա կայ, մեր մէջ բուռն ցանկութիւն ունենալով ծառայել գէթ աննշան կերպով, մեր մատաղ գրականութեան, մենք ուրախութեամբ յանձն կառնենք շարունակ թղթակցել թերթիդ այն նիւթերի վրայ, որով կարող էք ծանօթանալ գաւառական նիստ ու կացի, նրանց տպրուստի, նրանց ընտանեկան և այլ պայմանների հետ։

„Տարազի"-ի պահանջը գաւառական թղթակիցներից, որ պէտք է գաւառական կեանքը իր իսկական գոյնի մէջ ներկայացնել գրականութեան, այնքան համակրելի մեր է, որ մենք, որպէս գաւառացի, մեր դրական պարտականութիւնն ենք համարում այդ արդարացի պահանջին բաւականութիւն տալ, որքան կընեռեն մեր ոյժերը...

Թէև գաւառական կեանքում տեղի ունեցող երևոյթները այնքան անմիխիթար են, որ միմիայն կարեկցութիւն կարող են առաջ բերել, բայց և այնպէս մենք համոզւած ենք, որ վէրքը այն ժամանակ է միայն բուժւում, երբ վէրքը հիմնովին դիտելու միջոց ունի բժիշկը... Մի կողմը թողնելով գաւառական այլ և այլ քաղաքները, վերցնենք Երևանը, որ նահանգական քաղաք է համարւում և որը միջոց ունի քաղաքակրթութեան, բարոյականութեան օրինակ դառնալու գաւառների համար, սակայն հակառակ իրան կոչմանը, Երևանը շատ բաներում պէտք ունի ինքը օրինակ վերցնելու բարեկիրթ քաղաքներից, այնու ամենայնիւ զլանում է այդ անելու... Մեր ինտելիգենցիան, որ արտաքինով միայն նման է ինտելիգենցիայի, կարծես բաւականացած իր կոչումով, սուլելով է համարում մտածելն անգամ այն պարտականութեան մասին, որ ինքը կոչւած է օտար դասակարգին առաջնորդելու դէպի բարին և ազնիւը, դէպի կատարեալը—երջանիկ կեանքը։ Բայց կարող ենք ասել, թէ Երեւանը ունի Ճշմարիտ ինտելիգենտ երիտասարդներ, որոնք ժողովրդի անկեղծ բարեկամները պէտք է լինեն։

Ունինք մենք հասարակական զարգացման նպաստող հիմնարկութիւններից և հաստատութիւններից մի քանիսը—թատրոն, գրադարան, դասախօսութիւններ, ժողովրդական քարոզներ և վերջապէս լաւ ուղղութեամբ կարգաւորւած դպրոցներ...

Ս. Ա.

ԻՄ ԵՐԳԸ

ՆԷՐ Ա. Բ.—ԵԱՆՑԻՆ

Ես կուզէի երգ երգել
Երգ հոգեբուղխ եւ զարթ.
Սէր կուզէի ես երգել
Ումայիսեան կարմիր վարդ:

Կուզէի ես ընկերին
Իդէալով բորբոքել.
Տալ իմ կեանքը, իմ հոգին
Եւ իմ փառքն իսկ զոհել:

Ես կուզէի շատ բան...բայց
Ցոյց տուէք ինձ մի ընկեր,
Որ ինչ մանուկ նոր ծնած
Անկեղծ լար ու ծիծաղէր:

Ս. Հ.

—

մամուլի տեսութիւն

Պետերբուրգի և Մոսկուայի լրագիրները վերջերս սկսել են հայերի մասին մի քանի յօդուածներ տպագրել Առաջին անգամ առիթ տուաւ „Новости“ լրագիրը իր № 10-ի մէջ տպագրելով մի «Նամակ խմբագրութեան», որ տասն անգամ կարդալուց յետոյ անգամ ընթերցողը չէ կարողանում հասկանալ նամակի շարժառիթը: Նամակի հեղինակը խօսակցութիւն բանալով մի ինչ որ «Оставь Его»ի հետ հարցումներ է առաջարկում նրան, թէ ինչպէս առնել հայերի վաշխառութեան առաջը. ինչպէս թուլացնել նրանց ազդեցութիւնը և այն այսպիսի անմիտ և անտեղի հարցեր: Յետադէմ հակառակորդը նոյնչափ ծիծաղելի պատասխաններ է տալիս, որքան և «Новости»ի ազատամիտ (?) աշխատակիցը: Ոչ մի եւրոպական լրագրի մէջ դուք չէք գտնի այդպիսակ մի կեղծ, երկչոտ ու անմիտ յօդուած, որ գուցէ գրուած է «Новости»ի խմբագրութեան մէջ որոշ նպատակով, բայց հրէական խորամանկութիւնն այդտեղ ոչնչանում է ծիծաղելի երկչոտութեան առաջ:

Այդ յօդուածի առթիւ «Граждан.» իր № 16, 17 և 18 համարներում երեք ընդարձակ յօդուածներ է նուիրում հայկական կեանքին և թէև տեղ տեղ սխալ, աննրպատակ կարծիքներ է յայտնում, բայց գոնէ խօսում է պարզ և յայտնի առանց խոխոջի և խանչոցի: Նոյն առթիւ մենք կարդացինք և մի յօդուած Московскія Вѣдомости № 26-ի մէջ: Այդ լրագիրն արդէն յայտնի է ...

Մենք շատ ուրախ կլինենք, որ մայրաքաղաքի լրագրները ըմբռնէն և անաչառութեամբ ուսումնասիրէին հայկական կեանքը և մասնացոյց լինէին հայերի նոյն իսկ ամենախոշոր պակասութիւնների վրայ, բայց և խոստովանէին միևնոյն ժամանակ նրա առանձնայատկութիւնները և ձգտումների մաքրութեան աստիճանը, նրա սէրը դէպի քաղաքակրթութիւնը և այլն և այլն. վերաբերուէին հային ոչ նախապաշարմունքով, այլ ինչպէս վայել է մարդասէր պուբլիցիստներին. այն ժամանակ մամուլի մէջ չէին երևալ վերոյիշեալ անբովանդակ յօդուածները:

—

Մի շատ համակրելի առաջարկութիւն է անում «Каспій» լրագիրը, այն է կազմել Բագուում «Մասնաւոր ծառայողների փոխադարձ օգնութեան» ընկերութիւն:

Ցաւում է մարդու սիրտը—ասում է յարգելի լրագիրը—երբ նայում էք այդ մարդկանց, որոնք պապակով ու կարօտով աշխատանք են փնտրում իրանց օրական ապրուստը հայթայթելու համար. բայց չէ՞ որ դրանցից շատերը միայնակ չեն քաղցած մնում, այլ իրանց զաւակների, ընտանիքի հետ միասին... Միայնէք սնդրդրութիւնը Բագուում սիրող թանգութեան հետ եւ ձեր առաջ կըպատկերանայ իր մերկութեամբ գործաւորների սարսափելի դրութիւնը:

Լրագիրը դարձնում է տեղական տեխնիկների և ուրիշ բարձրագոյն ուսումն ստացածների ուշադրութիւնը այն խեղճ դասակարգի վրայ, որ կրծքի վրայ նշաններ չէ կրում և միշտ պաշտպանութիւնից զուրկ է:

Ինչ ասել կուզէ, որ լրագրի առաջարկութիւնը շատ իրաւացի է և նա պէտք է անպատճառ արձագանք գտնի բաղնեցիների մէջ:

—

Դարձնում ենք ընթերցողի ուշադրութիւնը «Մչակի» երեկուան № 16 համարի գեղեցիկ առաջնորդող յօդուածի վրայ, որտեղ յօդուածի յարգելի հեղինակը շատ լուրջ կերպով խօսելով հայերի յատկութիւնների մասին, ամփոփելով նրանց ընդհանուր դրութիւնը, առաջ բերելով այն բուռն մրցումը, որ հայը վարել է և վարում է նոյն իսկ ընութեան կլիմայի դէմ, ցոյց է տալիս որ հայը բուռն աշխատասէր երկրագործ ժողովուրդ է և ոչ թէ վաճառական, ինչպէս նա ճանաչուում է:

այլ եւ այլք

Ցայտնի է որ, Ֆրեդերիկոս մեծը շատ սէր ունէր գեղարուեստի, երաժշտութեան եւ Ֆրանսիական լեզուին. այդ պատճառաւ էլ նա շատ լաւ բարեկամական յարաբերութիւններ ունէր գրագէտների, հեղինակների եւ երաժիշտների հետ. Ֆրեդերիկոսի ամենամօտ բարեկամն էր նշանաւոր Ֆրանսիական հեղինակ-փիլիսոփայ Վոլտէրը. Մի օր թագաւորը հրամայեց խնջոյք սարքել եւ նշանաւոր հեղինակին էլ հրաւիրեց հետեւեալ տոմսակով, որ ներկայացնում է մի

տեսակ $\frac{p}{vener}$ *à* $\frac{6}{100}$, *Վոլտէրը հասկացաւ տոմսակի բովանդակութիւնը եւ նոյն կերպով պատասխանեց հետեւեալ աւելի կարճ ըէբուսով* G. a.

Այս հետաքրքրական ըէբուսներն այսպէս են վճռուում. Թագաւորը գրում է Vonez souper a Sansousi *(համեցէք ընթրելու Սանսուսիում). Վոլտէրի պատասխանն է* J'ai grand appetit *(Ես մեծ ախորժակ ունիմ).*

—

սուրիանդակ

Թիֆլիս եւ զաւառներ—շատերին: „Ամուսնական խնդիրներ“ Սրբազան Արիստակէս եպ. Սեղրակեանի գիրքը ստացուեց Թիֆլիսում եւ վաճառւում է Կենտրոնական գրավաճառանոցում եւ Աղբիւրի ու Տարազի խմբագրատանը: Գինն է մէկ ռուբլի. Ճանապարհածախք 20 կոպ.:

Երեւան—Ս. Օ, Տպում ենք միայն յուսալով որ հետեւեալթղթակցութիւնների մէջ նիւթ կլինի:

Ալէքսանդրապոլ—Յ. Տ. Պ. կաշխատենք:

Աղէքսանդրապոլ—Ն. Տ. Գ. Անցեալ տարուան համարները կանոնաւոր կերպով ուղարկուած են, կարելի է ստուգել փոստայից. ձեր պահանջած վեց համարները կարժենան 2 ր. 50 կ.:

Խմբ.-Հրատ. Տ. Նազարեան

Ցայտարարութիւններ

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵՂՐԱԿԵԱՆ

ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Ստացել է արդէն Թիֆլիսում և ծախւում է Կենդրոնական և Աղբիւրի վաճառանոցում:

Գինը 1 ռուբ.

Ճանապարհածախսը գնողի վրայ:

Une française désire une place de gouvernante.

Հասցէ: Почтовая улица, гравюрное заведеніе Дубелира.

ՊԱՐՍԿԱԿԱՆ ԶՐՈՑՑՆԵՐ

Վ. ՓԱՓԱԶԵԱՆՑԻ

Գինն է 5 կոպ

Тип. Ароръ Т. Я. Назарьянъ, уг. Гол. пр. и Бар. ул. Дозволено ценз. 9 февраля, Тифлисъ.